

ԱՄ ՓԱՐԹՆԸՐԶ ԶՈՆՍԱԼԹԻՆԳ ԶԱՄՓՆԻ
2011, մայիս

Նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի շահառուների վերլուծություն



Բնության համաշխարհային
հիմնադրամի հայաստանյան
մասնաճյուղ



ԱՄ Փարթնըրզ
Զոնսալթինգ Զամփնի

Բովանդակություն

1	ՆԱԽԱԲԱՆ	4
1.1	ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ	4
1.1.1	Տեղեկություններ ծրագրի մասին	4
1.1.2	Տեխնիկական առաջադրանք	5
1.2	ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	6
1.2.1	Շահառուների բացահայտում եւ նրանց կարիքների սահմանում	6
1.2.1.1	Շահառուների նկարագիր	6
1.2.1.2	Ծրագրում ներգրավելու հիմքերը	7
1.2.2	Տեղեկատվության հավաքագրում եւ գրառում	7
2	ՇԱՅԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	8
2.1	ՇԱՅԱՌՈՒՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	8
2.1.1	Տարածքները եւ սահմանները	8
2.1.1.1	Տեղական եւ մարզային իշխանություններ	8
2.1.1.2	Պետական կառույցներ	9
2.1.1.3	Հասարակական կազմակերպություններ	9
2.1.1.4	Մասնավոր հատված	9
2.1.2	Արգելավայրի վերաբերյալ տեղեկատվության անհրաժեշտությունը	10
2.1.3	Տեղեկատվության եւ հաղորդակցման ցանկալի ձևերը	11
2.2	ՇԱՅԱՌՈՒՆԵՐԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	11
2.2.1	Շահառուների վերաբերմունքը «Գնիշիկ» արգելավայրի ստեղծմանը	11
2.2.2	Շահառուների վերաբերմունքը համայնքների վարչական տարածքներում արգելավայր ստեղծելու նախաձեռնությանը	12
2.2.3	Շահառուների մոտեցումը արգելավայրի համայնքային կառավարմանը	13
2.2.4	Արգելավայրի հիմնական նշանակությունը համայնքի համար	15
2.3	ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՄ ՇԱՅԱՌՈՒՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ	15
2.3.1	Համայնքների մասնակցության մասին իրազեկվածությունը	15
2.3.2	Շահառուների մոտիվացիան	16
2.3.3	Հնարավոր խնդիրները համայնքների շահերի տեսանկյունից	17
2.3.4	Մասնակցության եւ համագործակցության համապատասխան կարողությունները	18
2.3.4.1	Տեղական եւ մարզային իշխանություններ	18
2.3.4.2	Պետական կառույցներ	18
2.3.4.3	Հասարակական կազմակերպություններ	18
2.3.4.4	Մասնավոր հատված	19
2.3.5	Ի՞նչ աջակցության կարիք ունեն շահառուները արգելավայրի կառավարմանը եւ շրջակա միջավայրի պաշտպանությանը արդյունավետորեն ներգրավվելու համար	19
2.3.6	Արգելավայրի ստեղծման եւ հետագա կառավարման հիմնական խոչընդոտները	20
2.3.6.1	Տեղական եւ մարզային իշխանություններ	20
2.3.6.2	Պետական կառույցներ	20
2.3.6.3	Հասարակական կազմակերպություններ	21
2.3.6.4	Մասնավոր հատված	21

2.4	ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԸ	21
2.4.1	Շահառուների ակնկալիքների բացահայտում.....	21
2.4.1.1	Տեղական եւ մարզային իշխանություններ	21
2.4.1.2	Պետական կառույցներ.....	22
2.4.1.3	Հասարակական կազմակերպություններ	22
2.4.1.4	Մասնավոր հատված.....	22
2.4.2	Ո՞վ պետք է իրականացնի արգելավայրի վերահսկողությունն ու կառավարումը.....	23
2.4.3	Արգելավայրի ներգործությունը շահառուների գործունեության վրա	24
2.4.3.1	Դրական ներգործություն	24
2.4.3.2	Բացասական ազդեցություն	25
2.4.4	Շահառուների վերապատրաստման կարիքները	26
2.5	ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	27
2.6	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	28
3	<u>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....</u>	30
3.1	ՀԱՎԵԼՎԱԾ 1. Հետազոտության մասնակից շահառուների ցանկ	30
3.2	ՀԱՎԵԼՎԱԾ 2. Շահառուների վերլուծության աղյուսակ	32
3.3	ՀԱՎԵԼՎԱԾ 3. Շահառուների կարիքների գնահատման հարցաթերթ	35
3.4	ՀԱՎԵԼՎԱԾ 4. Նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի քարտեզ.....	46
3.5	ՀԱՎԵԼՎԱԾ 5. Հղումներ	47

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԳՆ	Գյուղատնտեսության նախարարություն
ԲՆ	Բնապահպանության նախարարություն
ՄՆ	Մշակույթի նախարարություն
ԳԷՀ	Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամ
ԲՀՀ	Բնության համաշխարհային հիմնադրամ
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՄԱԶԾ	Միացյալ ազգերի զարգացման ծրագիր
ԲՊՏ	Բնապահպանական պետական տեսչություն
ՊՄՊ ՄԾ	Պատմական մշակույթի պահպանության Վայոց ձորի մարզային ծառայություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առետրային կազմակերպություն
ԲՀՊՏ	Բնության հատուկ պահպանվող տարածք
ՀԷԿ	Հիդրոէլեկտրոկայան
ԲՌԿ	Բնական ռեսուրսների կառավարում
ԻԱՄ	Իրավաբանական անձանց միություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԲՀԿ	Բարեգործական հասարակական կազմակերպություն
ԶՀԻ	Քաղաքացիական հասարակության ինստիտուտ

1 ՆԱԽԱԲԱՆ

1.1 ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Շահառուների վերլուծությունը ապահովում է արգելավայրերի ստեղծման եւ ընդլայնման, ինչպես նաեւ բնական ռեսուրսների կառավարման գործիքների զարգացման տեղեկատվական հիմքերը: Սույն հետազոտության նպատակն է օժանդակել արգելավայրի կառավարման մոդելի ստեղծման գործընթացներին՝ առավելագույն արդյունավետություն ապահովելով ինչպես բնապահպանության, այնպես նաեւ՝ համայնքային ներգրավվածության առումներով:

Շահառուների մասով վերլուծությունը կազմում է ընդհանուր հետազոտական աշխատանքի մի մասը, որն ունի եւս երկու բաղադրիչ.

- համայնքների հիմնարար սոցիալ-տնտեսական հետազոտություն,
- տուրիզմի զարգացման հնարավորությունների ուսումնասիրություն:

1.1.1 Տեղեկություններ ծրագրի մասին

Հայաստանի արդյունաբերության եւ գյուղատնտեսության զարգացումը, բնական տարածքների մեծամասշտաբ յուրացումը, ինչպես նաեւ կլիմայի փոփոխությունը բերել են Էկոհամակարգերի ամբողջականության եւ հավասարակշռության խախտման: Պատճառահետեւանքային ազդեցությունները ընդհանուր առմամբ ներառում են՝ խոցելի բնակմիջավայրերի դեգրադացումը, բուսական եւ կենդանական աշխարհի տեսակային կազմի նվազեցումը եւ Էկոհամակարգային համալիր մոտեցումների թերի կիրառումը: Այսպիսով, նվազում են համայնքների սոցիալ-տնտեսական բարեկեցությունն ապահովող հիմնական աղբյուրներից (բնական պաշարներից) օգտվելու հնարավորությունները:

«Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում» ծրագրի նպատակը Հայաստանի - գլոբալ բնապահպանական նշանակության կենսաբազմազանության պահպանությունն է: Ծրագրի խնդիրն է՝ նպաստել արգելավայրերի ընդլայնմանը ներկայիս արգելավայրերի համակարգում Էկոհամակարգերի առավել ընդգրկուն ներկայացվածությունն ապահովելու եւ կենսաբազմազանության պահպանության գործում շահառուների ակտիվ մասնակցությունը առավել խթանելու նպատակով:

Երկու հիմնական շեշտադրումներն են՝ բնության հատուկ պահպանվող տարածքների (ԲՀՊՏ) համակարգի ռացիոնալացումը եւ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը: Ծրագրի իրականացման արդյունքում երկրի ԲՀՊՏ համակարգն առավել լիարժեք կերպով կընդգրկի ներկայումս թույլ ներկայացված Էկոհամակարգերը եւ կենսաբազմազանությունը: Ներդրումները կուղղվեն համայնքներ՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ բնական պաշարների ռացիոնալ օգտագործման համար, ինչպես նաեւ բարելավելով գյուղական ենթակառուցվածքները եւ միեւնույն ժամանակ նպաստելով աղքատության ծավալների կրճատմանը: Հայաստանի ԲՀՊՏ համակարգում չընդգրկված որոշ Էկոհամակարգերը խիստ կարելու են միջազգային նշանակության մի շարք տեսակների, այդ թվում Էնդեմ ագրոկենսաբազմազանության պահպանության համար:

Ծրագիրը կազմում է ՄԱԶԾ/ԳԷՀ «Հայաստանի պահպանվող տարածքների զարգացում» միջին ծավալի ծրագրի բաղկացուցիչ մասը:

1.1.2 Տեխնիկական առաջադրանք

Առաջադրանքը ներառել է հետևյալ հիմնական խնդիրները.

- ներկայացնել շահագրգիռ կողմերի շահերը եւ հետեւողական լինել, որ համայնքների ներգրավվածությունը ծրագրում լինի մասնակցային,
- ծրագրով նախանշված խնդիրների համատեքստում ուսումնասիրել եւ գնահատել շահագրգիռ անհատների, խմբերի եւ կառույցների կարիքները եւ ակնկալիքները,
- որոշել տարբեր շահառուների մասնակցության ձեւերը ծրագրի իրականացման տարբեր փուլերում,
- մշակել առաջարկություններ հնարավոր համագործակցության ուղղությամբ:

Շահագրգիռ կողմերի մասով վերլուծությունը¹ ներառում է հետևյալ հանձնարարականները.

- **3.1:** Ուսումնասիրել օժանդակ/երկրորդական փաստաթղթերը, ներառյալ՝ ընթացիկ կամ նախատեսվող տարածաշրջանային կամ տեղական զարգացման ծրագրերը,
- **3.2:** Նախագծել շահագրգիռ կողմերի վերլուծության մեթոդոլոգիա եւ հարցաշարեր,
- **3.3:** Իրականացնել շահագրգիռ կողմերի վերլուծություն, որը՝
 - մասնակցային է եւ իրագործելի,
 - ներկայացնում է տարբեր շահագրգիռ կողմերի՝ դասակարգելով նրանց ըստ կարեւորության եւ ազդեցության աստիճանի,
 - ներկայացնում է շահագրգիռ կողմերի իրազեկվածությունը, դիրքորոշումն ու տեսակետները,
 - սահմանում է ծրագրի իրականացման հնարավոր խթաններն ու բացահայտում խոչընդոտները,
 - վերլուծում է շահագրգիռ կողմերի հիմնական մտահոգությունները եւ ակնկալիքները:
- **3.4:** Վարել հարցազրույցներ պետական կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքների (Ճակատեն, Ծավ, Շիկահող, Լեռնաձոր, Վարդանիձոր, Գեղանուշ, Ներքին Յանդ, Սրաշեն (Սյունիք) եւ Ագարակաձոր, Մոզրով, Խաչիկ եւ Արենի (Վայոց Ձոր), քաղաքացիական հասարակության ինստիտուտների² ներկայացուցիչների եւ համապատասխան այլ շահառուների հետ: Մասնավորապես՝
 - Սյունիքի եւ Վայոց ձորի մարզպետարանների ներկայացուցիչների,
 - համայնքապետեր եւ թիրախային համայնքային խորհուրդների անդամների,
 - ՀՀ գյուղատնտեսության նախարարության (ԳՆ) «Հայաստան» պետական ոչ առեւտրային կազմակերպության (ՊՈԱԿ) ներկայացուցիչների,
 - «Արփի» բնապատմական արգելոց
 - ՀՀ բնապահպանության նախարարության (ԲՆ) Բնապահպանական պետական տեսչության (ԲՊՏ) գրասենյակների,
 - ոլորտում շահագրգռված եւ ակտիվ ներգրավվածություն ունեցող հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ների),
 - քիզնեսի զարգացման աջակցության գործակալությունների,
 - միությունների, ասոցիացիաների եւ կոոպերատիվների,
 - մասնավոր ձեռնարկությունների՝ գինեգործության, լեռնահանքային արդյունաբերության, էներգիայի արտադրության, գյուղատնտեսության, եւ այլ ոլորտներում,
 - պոտենցիալ ներդրողների (Ագրոբիզնեսի եւ գյուղի զարգացման կենտրոն, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ եւ այլն):

¹ Վերլուծության տվյալները կօգտագործվեն նախատեսվող «Գնիշիկ» եւ «Խուստուփ», ինչպես նաեւ գործող «Չանգեզուր» արգելավայրի կառավարման պլանը մշակելու եւ/կամ լրամշակելու նպատակով:

² Քաղաքացիական հասարակության ինստիտուտները զեկույցում պայմանականորեն կընդհանրացվեն որպես հասարակական կազմակերպություններ: Այս ոլորտի հաստատություններն են նաեւ ասոցիացիաները, միջազգային կառույցների տեղական ներկայացուցչությունները, միությունները, կոոպերատիվները եւ այլն:

- **3.5:** ԲՀՀ հայաստանյան գրասենյակին տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը.
 - հիմնական շահագրգիռ կողմերը եւ նրանց խնդիրները / նպատակները,
 - կարելի է ենթախմբերը եւ անհատները,
 - ծրագիրն իրականացնող կառույցների եւ ՀՀ կառավարության հնարավոր ներգրավվածությունը շահագրգիռ կողմերի խնդիրներին ու նպատակներին արձագանքելու հարցում:

1.2 ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1.2.1 Շահառուների բազահայտում եւ նրանց կարիքների սահմանում

1.2.1.1 *Շահառուների նկարագիրը*

Շահառուների վերլուծությունը հաշվի է առնում ծրագրի տարբեր շահագրգիռ կողմերի կարիքները: Այն հնարավորություն է տալիս պատկերացնել օգուտների եւ վնասների հարաբերակցությունը, շահերի բախումները եւ մշակել այդ խնդիրների լուծման մեթոդներ: Բնապահպանական ծրագրերի իրականացման համատեքստում հիմնական շահառուներ են հանդիսանում արգելավայրերին հարակից համայնքները:

«Գնիշիկ» արգելավայրի ստեղծման ծրագրի շրջանակներում հարցումներ են անցկացվել նախատեսվող արգելավայրի տարածքների եւ դրանց սահմանների մասին տարբեր շահառուների կարծիքը պարզելու, ինչպես նաեւ արգելավայրի կառավարման մոդելների եւ ընդհանուր առմամբ արգելավայրի ստեղծման վերաբերյալ շահառուների մոտեցումները գնահատելու համար: Ուսումնասիրության շրջանակներում կազմակերպվել են հարցումներ Երեւանում, ինչպես նաեւ ՀՀ երկու հարավային մարզերում՝ Վայոց Ձորում եւ Սյունիքում:

Շահառուների նախնական ցանկը կազմվել է տարբեր փաստաթղթերի³, ուղեցույցների եւ համապատասխան վեբ կայքերի դիտարկման եւ ընդհանուր իրազեկվածության արդյունքում: Շահառուների որոշման հարցում տեղեկատվական օժանդակություն են տրամադրել Ագրոքիզնեսի եւ գյուղի զարգացման կենտրոնը, ինչպես նաեւ Օրիոս կենտրոնը: Վերլուծության ընթացքում շահառուների ցանկը փոխվել է եւ համալրվել՝ հիմնվելով նաեւ այն սկզբունքի վրա, թե ում են ցանկում ընդգրկված կազմակերպությունները տեսնում որպես ծրագրի շահառուներ:

Այնուհետեւ շահառուները դասվել են մի քանի խմբերի: Մարզերում խմբերն են՝ տեղական եւ մարզային իշխանությունները, պետական կառույցները, քաղաքացիական հասարակության ինստիտուտները (այլապես՝ ՀԿ-ները), մասնավոր հատվածը (լեռնահանքային ձեռնարկություններ, ֆերմերային տնտեսություններ, գինեգործներ, մեղվապահներ եւ այլն):

Երեւանում խմբերն են՝ պետական կառույցները, միջազգային կազմակերպությունները, քաղաքացիական հասարակության խմբերը կամ ՀԿ-ները, ծրագրերը (օրինակ՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարում եւ մրցունակություն» ծրագիրը): Շահառուների նախնական ցանկը, ինչպես նաեւ հարցաշարերը հաստատվել են ԲՀՀ հայաստանյան մասնաճյուղի համապատասխան մասնագետների կողմից:

³ Նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի կառավարման պլանի նախագիծ, «Շիկահող» պետարգելոցի կառավարման պլանի նախագիծ:

1.2.1.2 Ծրագրում ներգրավելու հիմքերը

Շահառուների ընտրությունը հիմնված է եղել համապատասխանության չափորոշիչների վրա: Մի կողմից, ընտրվել են կառույցներ կամ անհատներ, որոնց լիազորությունները, շահերը եւ/կամ միջոցները կարող են այս կամ այն կերպ ազդել ծրագրի ընթացքի վրա: Մյուս կողմից, հաշվի են առնվել այն խմբերը, ում գործունեության զարգացման վրա ծրագիրը կարող է զգալի դրական կամ բացասական ներգործություն ունենալ:

Ընդհանուր առմամբ, շահառուների նախնական ցանկում ներգրավվել են 80 հարցվողներ: Մշակվել է տվյալների բազա, որտեղ ներկայացվել են շահագրգիռ կառույցի ներկայացուցիչների տվյալները: Հարցվողների թիվը կազմել է 74, որից 25-ը՝ Վայոց Ձորում (տես Հավելված 1), 30-ը՝ Սյունիքում եւ 20-ը՝ Երեւանում: 9-ը հարցում իրականացվել է էլեկտրոնային տարբերակով: Շահառուների սպասելիքները, կարիքները, ծրագրի նկատմամբ նրանց դիրքորոշումը ամփոփ ներկայացված են առանձին աղյուսակով (տես Հավելված 2):

1.2.2 Տեղեկատվության հավաքագրում եւ գրառում

Առաջին հերթին ուսումնասիրվել են տարբեր նմանատիպ հետազոտություններ, աշխատանքային փաստաթղթեր եւ այլն: Երկրորդական փաստաթղթերի ուսումնասիրությունն արվել է թիրախային մարզերում ընթացիկ կամ նախատեսվող ծրագրերի նպատակներն ու արդյունքները պարզելու եւ համագործակցության հնարավոր ուղիներ փնտրելու համար:

Հարցաշարի (տես Հավելված 3) կազմման աշխատանքներին մասնակցել են ԲՀՊՏ-ների եւ սոցիալ-տնտեսական հետազոտությունների ոլորտում փորձառություն ունեցող մասնագետներ: Հարցաշարում տեղ են գտել բաց եւ փակ հարցեր, որոնց պատասխանները ստացվել են շահառուների հետ հանդիպումների եւ հարցազրույցների, հեռախոսային հարցազրույցների կամ էլեկտրոնային հարցումների ընթացքում:

Վայոց Ձորում հարցմանը մասնակցել են 4 համայնքներ, իսկ Սյունիքում՝ 10 (ներառյալ Կապան եւ Քաջարան քաղաքները): Հավաքագրված տեղեկատվությունը գրառվել է, թվայնացվել եւ համապատասխանաբար վերլուծվել:

2 ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2.1 ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ

2.1.1 Տարածքները եւ սահմանները

Վայոց Ձորում իրականացված հարցումները ցույց են տալիս, որ շահառուների մեծամասնությունը ընկալում է Նախատեսվող արգելավայրը որպես արգելոց կամ ազգային պարկ՝ չնայած հարցի ձեւակերպման մեջ նշված «արգելավայր» բառի: Ընդհանուր առմամբ, նրանց հիմնական մտավախությունը բնօգտագործման սահմանափակումներն են:

Հարցվողների գերակշիռ մասը նշում է, որ տեղյակ է ծրագրի մասին: Առավել իրազեկված են ՏԻՄ-երը եւ համայնքների այլ ներկայացուցիչները: Ըստ հարցվողների՝ ծրագրի իրականացնող եւ կամ ֆինանսավորող կազմակերպություններն են՝ Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը (ԲՀՀ), Հայաստանում Միավորված ազգերի զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ), Նորվեգիայի կառավարությունը եւ այլն: Չնայած դրան, ՀՀ բնապահպանության նախարարությունը (ԲՆ) եւ Վայոց Ձորի մարզպետարանը արգելավայրի կառավարման եւ ընդհանուր մարզի զարգացման հարցերում ընկալվում են որպես հիմնական դերակատարներ: Հարցման այս մասնակիցները հայտնել են, որ տեղյակ են արգելավայրի համայնքային կառավարման ոլորտում Նախատեսվող համապատասխան փոփոխությունների մասին: ՏԻՄ-երի որոշ ներկայացուցիչներ նշում են նաեւ, որ ունեն տեղեկություններ միջհամայնքային հիմնադրամի ստեղծման վերաբերյալ: Ըստ նրանց՝ համայնքների ներկայացուցիչները լինելու են հիմնադրամի կառավարման խորհրդի կազմում: Որոշ հարցվողներ նշում են նաեւ, որ տեղյակ են արգելավայրի կազմում Գնիշիկ, Արենի, Ագարակաձոր, եւ Խաչիկ համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի մի մասի ընդգրկման, ինչպես նաեւ Ջաֆարի եւ Վերին Ամաղու գյուղերի ներգրավման մասին:

2.1.1.1 *Տեղական եւ մարզային իշխանություններ*

Տեղական եւ մարզային իշխանությունները իրազեկված են, որ համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի մի մասը ապագայում կընդգրկվի արգելավայրի կազմում եւ որ Նոր արգելավայրը որեւէ կերպ չի խոչընդոտի գյուղատնտեսական աշխատանքներին: Որոշ համայնքների ղեկավարներ հստակ պատկերացնում են՝ որքան հողատարածքներ պետք է հատկացվեն Նախատեսվող արգելավայրին: Ընդհանուր առմամբ, սակայն, հողահատկացման մասին պատկերացումները տարաբնույթ են եւ երբեմն՝ իրարամերժ (300 հա-ից մինչեւ 20,000 հեկտար):

Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ Նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի մասով իրազեկումը նախ եւ առաջ պետք է անդրադառնա հատկացվող տարածքի չափի, ինչպես նաեւ սահմանների հստակեցմանը: Սա հատկապես կարեւոր է, եթե հաշվի առնենք, որ ընդհանուր հարցվողների մոտավորապես մեկ երրորդը (հիմնականում մասնավոր ձեռնարկատերերը) մարզում ծանոթ չեն արգելավայրի Նախատեսվող տարածքներին. տարածքների, ինչպես նաեւ արգելավայրի սահմանների ճշգրտումը կիրականացնվի ծրագրի հաջորդ փուլում համայնքների հետ մասնակցային պլանավորման գործընթացների շտրիկով:

2.1.1.2 Պետական կառույցներ

Պետական կառույցների ներկայացուցիչները հայտնել են, որ բավական տեղեկացված են ծրագրի մասին: Ընդհանուր առմամբ, միայն հարցվողների մոտավորապես մեկ երրորդն է, որ իրազեկված է «Գնիշիկ» արգելավայրի ստեղծման ծրագրի մասին՝ ի հավելումն այն հարցվողների, որոնք նշել են, որ միայն մասամբ են ծանոթ ծրագրին:

Որոշ պատասխաններում ակնհայտ է միեւնույն հարցվողի կարծիքների իրարամերժ բնույթը: Օրինակ՝ հարցվողներից երկուսը նշում են, որ չգիտեն ծրագրի մասին: Սակայն տարածքների եւ սահմանների մասին հարցի շրջանակներում նրանք տալիս են ստույգ պատասխաններ եւ հստակ պատկերացում են նախատեսվող արգելավայրի սահմանները: Պատմական մշակույթի պահպանության Վայոց Ձորի մարզային ծառայության (ՊՄՊ ՄԾ) ներկայացուցիչը նույնպես նշում է, որ ծանոթ է ծրագրին, սակայն հաջորդող հարցերի շրջանակներում հարցվողը ներկայացնում է արգելավայրի ստեղծման նախապատմությունը եւ հավելում, որ դեռեւս 90-ական թվականներին արգելավայրի նախագծումը ավելի փոքր տարածք էր ընդգրկում:

2.1.1.3 Հասարակական կազմակերպություններ

ՀԿ ոլորտի ներկայացուցիչները նշում են, որ ծրագրի գլխավոր հովանավորն է ԲՀՀ հայաստանյան մասնաճյուղը (ՀՀ ԲՆ հետ համագործակցությամբ):

2.1.1.4 Մասնավոր հատված

Մասնավոր հատվածի ներկայացուցիչները բավական լավ են պատկերացում արգելավայրի տարածքները: Չնայած նրանց մեծամասնությունը նշում է, որ առհասարակ ծանոթ է արգելավայրի ստեղծման ծրագրին: Նման իրավիճակը կարելի է բացատրել նրանով, որ օրինակ մեղվապահները, անասնապահները եւ գինեգործ-այգեգործները օգտագործում են տվյալ տարածքները գյուղատնտեսական կամ արտադրական նպատակներով: Հարցվողների մեծ մասը նշում է, որ արգելավայրի ստեղծման նպատակը կենսաբազմազանության (էնդեմիկ, հազվագյուտ կամ վտանգված տեսակներ) պահպանությունն է: Որոշ շահառուների համար նախատեսվող արգելավայրը հին խաղողի այգիների վերատնկման, ինչպես նաեւ եգալի «Հազարաշեն» կոչվող կառույցների վերականգնման միջոց է: Այս շահառուները հավատացած են, որ նախանշված ծրագիրը կարող է հզորացնել համայնքները՝ կամրջելով եթնոտուրիզմը եւ էկոտուրիզմը սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման հետ:

Մասնավոր հատվածի ներկայացուցիչները հիմնականում տեղեկացված էին ծրագրի ֆինանսավորող կամ իրականացնող կողմերի մասին:

Նշումներ եւ դիտարկումներ:

⇒ Հարցվողների գրեթե կեսը ծանոթ է արգելավայրի սահմաններին եւ տարածքներին: Տարածքների մասին խոսելիս հարցվողները սովորաբար նկատի ունեն գյուղական համայնքները եւ անապաման նշում են, որ արգելավայրը ընդգրկում է իր մեջ նաեւ Նորավանքի կիրճը:

Հատկապես պետական կառույցները բավական լավ են տեղեկացված նախատեսվող արգելավայրին հարակից համայնքների եւ տարածքների մասին, քանի որ մասնավորապես «Հայանտառ»-ը եւ ԲՊՏ Վայոց Ձորի տարածքային բաժինը պատասխանատու են մարզի բնապահպանական

վերահսկողության համար: Հարցվողները սովորաբար նշում են, որ արգելավայրի տարածքը սահմանակից է Նախիջեւանին (Վայոց Ձորի մարզում հաջիկը սահմանամերձ գյուղ է հանդիսանում):

2.1.2 Արգելավայրի վերաբերյալ տեղեկատվության անհրաժեշտությունը

Հարցումների իրականացումը թույլ տվեց պարզել շահառուների տեղեկատվության կարիքները: «Գնիշիկ» արգելավայրի ստեղծման առնչությամբ Վայոց Ձորում հարցվողներին հիմնականում հետաքրքրում են *իրավական դաշտն ու օրենսդրությունը*, ինչպես նաեւ *արգելավայրի կառավարումն ու օգտագործումը*: Հարցումների արդյունքները վկայում են, որ հարցվողներին ավելի քիչ հետաքրքրում են *քարտեզները եւ հողօգտագործման պլանները*: Սակայն այս կարգի ինֆորմացիան շատ է կարեւորվում մարզային եւ տեղական իշխանությունների կողմից:

ՀԿ-ների ներկայացուցիչներին հետաքրքրում են *իրավական դաշտը, օրենսդրությունը*, ինչպես նաեւ *արգելավայրերի կառավարման միջազգային փորձը*: Որոշ հարցվողներ դիտարկում են, որ *իրավական դաշտի եւ օրենսդրության* ոլորտներում խնդիրները հիմնականում կիրառական բնույթի են: ՊՄՊ ՄԾ ներկայացուցիչները նշում են, որ իրավական սահմանափակումներ պետք է կիրառվեն ոսկու հանքարդյունահանման կամ բնական հուշարձանների (ինչպիսին է վերջերս հայտնի դարձած աշխարհի ամենահին գինու հնձանը) սեփականաշնորհման դեպքում:

Հարցման ժամանակ շահառուներից ոմանք հրաժարվել են գնահատել ներկայացված տեղեկատվությունը ըստ կարեւորության եւ առաջ են բերել իրենց իսկ հուզող հարցերը: Այսպես, 25 հարցվողներից երեքը նշել են *արգելավայրի կանոնադրության նախագծին* ծանոթանալու իրենց ցանկության մասին եւ կարեւորության բարձր մակարդակ են վերագրել այդ տեղեկատվությանը: Սակայն, *արգելավայրերի կառավարում եւ օգտագործում* թեման, ըստ էության, ամփոփում է այս դրույթը, քանի որ երկուսն էլ ենթադրում են արգելավայրի կառավարման հիմնական սկզբունքները: Մեկ այլ օրինակ է *տարածքի կենսաբազմազանությունը*, որն ուղղակիորեն առնչվում է *տարածքի ուսումնասիրությունների արդյունքներ* կետին:

Արգելավայրերի կառավարում եւ օգտագործում թեմայի ներքո հարցվողներին առավել հետաքրքրում են.

- համայնքի ներգրավվածությունը,
- արգելավայրի կառավարման հիմնական սկզբունքը (պետական, համայնքային եւ այլն),
- արգելավայրի կառավարման դերերի եւ պարտականությունների հստակեցումը,
- համայնքի եւ արգելավայրի՝ որպես վարչական միավոր, իրավահարաբերությունները:

Վերջին դրույթը բխում է համայնքային կառավարման մոդելի ներկայացման թեմայից եւ մտահոգություն է առաջացնում շահառուների շրջանում՝ կապված սեփականության իրավունքի եւ կառավարման հիմնադրույթների հետ: Շահառուներին հետաքրքրում են նաեւ *արգելավայրի ստեղծման բուն նպատակները* (անտառապատում, ծառատունկ, եւ այլն): Կարեւորություն է տրվում նաեւ *նախատեսվող արգելավայրի պատմության եւ պատմական արժեքների ուսումնասիրությանը*:

Կենսաբազմազանության մասին տեղեկատվությունն հատկապես կարեւորվում է ՀԿ-ների կողմից, որոնցից մեկը մի քանի տարի առաջ իրականացրել է նման ուսումնասիրություն եւ ցանկություն ունի նոր տվյալներ ստանալ տարածքի կենսաբազմազանության մասին: Տեղական իշխանություններին եւ համայնքի այլ ներկայացուցիչներին այս փուլում առավել հետաքրքրում են *արգելավայրի կոնկրետ վարչական սահմանները*: *Բնապահպանական սահմանափակումների* համատեքստում մարդկանց հիմնականում հուզում են արգելավայրի ստեղծման արդյունքում հողօգտագործման եւ առհասարակ

մարդու գործունեության սահմանափակման հետ կապված հարցերը: Նրանք կարծում են, որ արոտավայրերի սահմանափակման փոխարեն, պետք է արգելվի որսը եւ ցանկանում են տեսնել պահպանության եւ վերահսկողության ավելի խիստ ռեժիմ:

2.1.3 Տեղեկատվության եւ հաղորդակցման գանկայի ձեւերը

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ Նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի մասին տեղեկատվություն ստանալու ամենակարելի եւ ցանկալի միջոցը *հանդիպումներն* են: Ի թիվս *գրականության* եւ *Էլեկտրոնային հաղորդակցության*՝ հարցվողներից վեցը նշում են *քննարկումների* եւ *մարզային հեռուստատեսության* կարելիության մասին: Ընդհանուր առմամբ, հարցվողները կարելիություն են *ուղղակի շփումները* համայնքների բնակիչների հետ՝ որպես իրազեկության բարձրացման ամենաարդյունավետ միջոց, ինչպես նաեւ մտքերի փոխանակման եւ առաջարկներ ներկայացնելու յուրօրինակ հարթակ: Նրանք շեշտում են նաեւ հանդիպում-քննարկումներին պետական կառույցների եւ ՏԻՄ-երի մասնակցության կարելիությունը:

Էլեկտրոնային կապը դիտվում է որպես կարելի միջոց համայնքների՝ արտերկրում բնակվող-աշխատող ներկայացուցիչների համար, որոնք այս կերպ կկարողանան հետեւել հայրենի բնակավայրում տեղի ունեցող իրադարձություններին եւ ըստ անհրաժեշտության, արձագանքել կամ մասնակցել: Որոշ դեպքերում հարցվողները նշում են, որ տեղեկատվության տարածման բոլոր եղանակները հավասարապես կարելի են եւ որ իրենց պատասխանները առավել բովանդակալի կլինեն այն դեպքում, եթե նախապես ստույգ տեղեկություն (օրինակ՝ բուկլետների տեսքով) ունենան ծրագրի մասին:

2.2 ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.2.1 Շահառուների վերաբերմունքը «Գնիշիկ» արգելավայրի ստեղծմանը

«Ինչպե՞ս եք վերաբերվում նշված արգելավայրի ստեղծմանը» հարցադրումը նպատակ է ունեցել պարզել՝ որքանով են շահառուները կողմ արգելավայրի ստեղծմանը: Համաձայն հարցումների՝ շահառուները դրական են վերաբերվում «Գնիշիկ» արգելավայրի ստեղծմանը: ՏԻՄ-երը եւ ՀԿ-ները գտնում են, որ արգելավայրի ստեղծման արդյունքում մոտակա տարիներին դրական արդյունքները նկատելի կլինեն: «Գնիշիկ» արգելավայրի ստեղծմանն ուղղված չեզոք կամ բացասական արձագանքները սակավ են: Անվստահությունը, որպես կանոն, կապված է հողօգտագործման սահմանափակումների, արգելավայրը այլ նպատակների ծառայեցնելու կամ բնությունը Էկոտուրիզմի զարգացման արդյունքում վնասելու հետ:

Հարցման մասնակիցների շրջանում հնչած դրական պատասխանները որոշ դեպքերում վերապահումներ են պարունակում: Չնայած ընդհանուր դրական մոտեցմանը՝ տեղացիների մտավախությունն այն է, որ արգելավայրը կծառայի միայն հարուստ եւ արտոնյալ խափի շահերին: Կան նաեւ մտավախություններ՝ կապված որեւէ բիզնեսի կողմից հողերի զավթման, շրջակա միջավայրի վրա անթրոպոգեն ազդեցության կամ ուղղակի ներգործության հետեւանքով առաջացած իրական կամ պոտենցիալ վնասների հետ: Հարցվողներից մեկը նշել է, որ դրական կվերաբերվի արգելավայրի ստեղծմանը այն դեպքում միայն, եթե այն լինի պետական կամ եթե արգելավայրի կառավարման համար ընտրվեն համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ:

Դրական վերաբերմունքը հիմնված է հանգստի կազմակերպման կամ տուրիզմի⁴ կազմակերպման եւ արգելավայրի հարակից համայնքներում տնտեսական գործունեության աշխուժացման հետ: Ըստ ռեսպոնդենտների՝ բնապահպանությունը կարող է ստեղծել եկամուտների գեներացման լրացուցիչ հնարավորություններ: Արգելավայրի ստեղծումից բխող օգուտները մարդիկ ընկալում են՝ որպես նոր աշխատատեղեր, ներդրումներ, ինչպես նաեւ արգելավայրի ստեղծման հետ անմիջականորեն առնչվող նորագույն տեխնոլոգիաների եւ նորարարությունների ներմուծում մարզ: Այսպիսով, արգելավայրի ստեղծումը ենթադրում է մասնակցային գործընթացներ, բնապահպանություն եւ շահույթ հետապնդող ձեռնարկատիրության զարգացում: Բնապահպանության առումով, հարցվողներից մի քանիսն ակնկալում են, որ արգելավայրի ստեղծումը կնպաստի որսի արգելմանը, վայրի տեսակների պոպուլյացիայի աճին եւ նախկին բնավիճակի վերականգնմանը: Նրանք նաեւ համոզված են, որ միայն արգելավայրի ստեղծումը կապահովի Գնիշիկի հարուստ բուսականության աշխարհի պահպանությունը: Հատուկ պահպանման ռեժիմը կերաշխավորի նաեւ Հայաստանի Կարմիր գրքում գրանցված տեսակների պահպանությունը:

Հարցման ժամանակ շահառուները հաճախ անդրադառնում են նախատեսվող արգելավայրի տարածքի եւ կենսաբազմազանության առանձնահատկություններին: Նրանք նշում են, որ մինչ օրս բնապահպանական գործառնությունները իրականացվել են մարզային մակարդակում, իսկ այսուհետ բնության պահպանությունը կդառնա պաշտոնական եւ ավելի մեծ վստահություն կվայելի համայնքների եւ ՏԻՄ-երի կողմից:

Տեղի բնակիչներից ոմանք առարկում են արգելավայրի ստեղծմանը: Հարցմանը մասնակցող հինգ համայնքներում հնչած բացասական արձագանքները կրկին անգամ կապված են խոտհարքերի եւ արոտավայրերի հնարավոր կորստի կամ օգտագործման սահմանափակման հետ: Բացասական դիրքորոշում ունեցող շահառուները կարծում են նաեւ, որ արգելավայրը կարող է դառնալ հարուստների որսատեղի՝ անտեսելով տեղի բնակչության շահերն ու կամքը: Նմանատիպ փորձի բացակայությունը նախկինում լրացուցիչ անվստահություն եւ կասկածամտություն են առաջացնում որոշ հարցվողների շրջանում:

2.2.2 Շահառուների վերաբերմունքը համայնքների վարչական տարածքներում արգելավայր ստեղծելու նախաձեռնությանը

Համայնքների վարչական տարածքներում «Գնիշիկ» արգելավայրի ստեղծմանը դրական արձագանքող հարցվողները գտնում են, որ արգելավայրը հնարավորություն կտա նվազեցնել կամ վերացնել շրջակա միջավայրի վրա բացասական ներգործությունը: Հարցման մասնակիցները կարելուրում են նաեւ կենդանական աշխարհի պահպանությունը, տեսարժան վայրերն ու որսի կազմակերպման հնարավորությունները, որոնք կարող են համալրել համայնքի բյուջեն: Մյուսները գտնում են որ արգելավայրի ստեղծումը համայնքի վարչական սահմաններում թույլ կտա վերահսկել որսը եւ համոզմունք են հայտնում, որ ծրագիրը չի խոչընդոտի գյուղատնտեսական աշխատանքներին:

Ընդհանուր առմամբ, հարցվողները կարելուրում են բնապահպանական նպատակները, սակայն մտավախություն ունեն, որ բնակավայրերի ընդլայնումը կարող է անհնարին դառնալ հետագայում: ՊՄՊ ՄԾ ներկայացուցիչները նշում են, որ Արենի համայնքի վարչական հողերից 160 հա գտնվում է «Արփի» պատմամշակութային արգելոցի ենթակայության տակ, իսկ նոր արգելավայրը կպահանջի եւս 100 հա. արդյունքում գյուղատնտեսական նշանակության հողերը խիստ կնվազեն:

⁴ Հարցվողները մասնավորապես բարձր են գնահատում քարանձավային, ագրոտուրիզմի եւ էկոտուրիզմի պոտենցիալը:

Այսպիսով, հարցվողները ընդհանուր առմամբ լավ են տեղեկացված համայնքների վարչական սահմանները արգելավայրի տարածքում ընգրկելու մասին եւ նրանց մի մասը գիտակցում է, որ պահպանվող տարածքները, որպես կանոն, ներառում են համայնքային հողեր: Միաժամանակ կան հարցվողներ, որոնք անվստահություն են հայտնում այս առումով՝ համարելով, որ արգելավայրի ստեղծումը ենթադրում է համայնքների բնօգտագործման իրավունքների սահմանափակումներ:

Նշումներ եւ դիտարկումներ:

⇒ Ընդհանուր առմամբ, շահառուների դրական դիրքորոշումը գերակշիռ է, սակայն *կողմ* փաստարկները միանշանակ չեն իրենց բնույթով: Շահառուները կարելուրում են նպաստավոր միջավայրի ապահովումը. արգելավայրի ճիշտ կառավարումը եւ համապատասխան ղեկավարող մարմնի ընտրությունը, ծրագրի մասին ամբողջական եւ ժամանակին տեղեկատվությունը, ինչպես նաեւ նախատեսվող արգելավայրի սահմանների, բնապահպանական սահմանափակումների, բնական ռեսուրսների հասանելիության մասին տեղեկությունները:

⇒ Մեղվապահները եւ անասնաբույծները, որպես կանոն, բացասական են վերաբերվում համայնքի վարչական սահմաններում արգելավայր ստեղծելու նախաձեռնությանը:

⇒ Համայնքների վարչական սահմաններում «Գնիշիկ» արգելավայրի ստեղծումը որոշ հարցվողների մոտ ասոցացվում է համայնքային կառավարման մոդելի հետ: Այսպես, նրանք նշում են, որ եթե արգելավայրի կառավարումը լինի համայնքային մակարդակում, այն կարող է շահութաբեր լինել, ապահովել ենթակառուցվածքների (ճանապարհներ եւ էլեկտրամատակարարում եւ այլն) զարգացում կամ աջակցել համայնքային նախագծերի իրականացմանը (դպրոցներ, մանկապարտեզներ, ամբուլատոր գյուղական բժշկական հաստատություններ եւ այլն):

⇒ Հարցման մասնակիցներից ոմանք գտնում են, որ արգելավայրի համայնքային կառավարման մոդելի իրավական հիմքերն ամրապնդման կարիք ունեն: Այս կերպ տեղական բնակչությունը կարող է վերահսկել մուտքը տարածք, արգելել կամ վերահսկել հանքարդյունաբերությունը, կանոնակարգել որսը, ձկնորսությունը, տուրիզմը եւ այլն: Համայնքներից բացի սեփականատիրության եւ կառավարման հստակ լիազորությունների ջատագովներ են ՀԿ ներկայացուցիչները:

2.2.3 Շահառուների մոտեցումը արգելավայրի համայնքային կառավարմանը

Դրական դիրքորոշում ունեցող հարցվողները կարելուրում են արգելավայրի կառավարման եւ բնապահպանական մեխանիզմների յուրացումը եւ հետեւապես՝ խնդիրների լուծումը տեղական մակարդակում: Հարցման մասնակիցները գտնում են, որ արգելավայրի համայնքային կառավարումը կարող է լուծում տալ սոցիալական խնդիրներին մասամբ միայն. աշխատատեղեր տուրիզմի զարգացման համատեքստում: Այս տեսանկյունից համայնքը կկառավարի իր հողերը՝ «Գնիշիկ» արգելավայրի ադմինիստրացիայի հետ համատեղ: Շահառուները ակնկալում են, որ արգելավայրը սոցիալ-տնտեսական զարգացման խթան կհանդիսանա նաեւ մարզի հեռավոր լեռնային գյուղերի համար:

Հարցվողները կարելուրում են համայնքների ներգրավումը արգելավայրի ստեղծմանն առնչվող որոշումների կայացման գործընթացում: Համայնքային կառավարման սկզբունքներն ու մեխանիզմները իրենց հերթին պետք է ապահովեն թափանցիկություն համագործակցության զարգացման հեռանկարներում: Կան հարցվողներ, որոնք վերապահումով են մոտենում

արգելավայրի համայնքային կառավարմանը կամ դժվարանում են հստակ դիրքորոշում ունենալ: Կան կարծիքներ, որ սոցիալական խնդիրները կլուծվեն միայն այն դեպքում, եթե արգելավայրի լիարժեք գործունեության համար ներդրվեն համապատասխան միջոցներ: Համայնքային կառավարման մոդելի արդյունավետությունն ասոցացվում է տուրիզմի եւ տնտեսության այլ ճյուղերի դիվերսիֆիկացման միջոցով բնակչության կենսապայմանների բարելավման հետ:

ՀԿ ներկայացուցիչները կասկածանք են հայտնում համայնքային կառավարման արդյունավետության առումով եւ շեշտում են արգելավայրի կառավարման որեւէ միջազգային փորձի տեղայնացման անհրաժեշտությունը: Հարցվողների այս խումբը գտնում է, որ մի կողմից համայնքի մասնակցությունը լավ է, քանի որ այս կերպ համայնքը կգիտակցի իր պարտականությունները եւ օգուտները, իսկ մյուս կողմից նման որոշումը կարող է հանգեցնել համայնքի հետ կոնֆլիկտի՝ կապված արգելավայրին հատկացվող համայնքային հողատարածքների եւ այնտեղ անօրինական շինություններ եւ կառույցներ թույլատրելու հետ⁵:

ՊՄՊ ՄԾ ներկայացուցիչը նշում է, որ տարածքը պետք է ընդլայնվի՝ ընդգրկելով Արփի արգելոցը եւ տալով բնապահպանական լիազորություններ եւ գործառնություններ հատկապես այս արգելոցի աշխատակազմին: ԲՊՏ ներկայացուցիչը մասամբ է կողմ կառավարման այս մոդելին: Կառույցի ներկայացուցիչները նշում են նաեւ, որ բնական ռեսուրսները խիստ սակավ են, այդ իսկ պատճառով անգամ սանիտարական հատումները Վայոց Ձորի մարզում պետք է առհասարակ արգելվեն: Նրանք գտնում են նաեւ, որ համայնքների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումը պետք է լինի առաջնայնություն՝ անկախ արգելավայրի կառավարման մոդելից եւ զուգորդվի բնապահպանական ծրագրերի իրականացման հետ: «Հայանտառ»-ի Վայոց Ձորի մասնաճյուղի տնօրենը դեմ է արգելավայրի համայնքային կառավարման մոդելին՝ որպես փաստարկ բերելով մարդկային գործոնի ազդեցության հնարավորությունը: «Հայանտառ»-ի ներկայացուցչի համոզմամբ համայնքի բնակիչներն ու համայնքապետերն ունեն ընդհանուր շահեր: Համայնքի բնակիչները համապատասխանորեն չեն արձագանքում ծառահատման կամ որսագողության դեպքերին եւ առհասարակ պասիվ են բնապահպանության ոլորտում:

Բացասական դիրքորոշումը կապված է բնական ռեսուրսների սահմանափակումների եւ սոցիալական խնդիրների վատթարացման հետ՝ ի հավելումն այն մտավախության, որ համայնքապետերը կարող են գործել որպես տարածքի սեփականատերեր եւ մոնոպոլացնել տնտեսական գործունեության որոշ ճյուղեր:

Նշումներ եւ դիտարկումներ:

⇒ Հարցվողները բավականին հաճախ հստակ պատկերացնում են, թե ինչ սոցիալ-տնտեսական օգուտներ կարող է առաջարկել արգելավայրը. օրինակ՝ *կանոնակարգված արածեցումը կբերի անասնակերի քանակի եւ որակի բարձրացմանը, որսի լիցենզիա ձեռք բերելու համար վճարումներ կարվեն տեղական համայնքների բյուջեներ:*

⇒ Հարցվողները հայտնել են երկու իրար խիստ հակասող տեսակետներ: Մի կողմից նախապատվությունը տրվում է արգելավայրի կենտրոնական պետական կառավարմանը (անվստահություն ցուցաբերելով համայնքային կառավարման ռացիոնալ մոտեցումներին): Սակայն մյուս կողմից՝ նախապատվությունը տրվում է արգելավայրի համայնքային կառավարմանը, քանի որ ծանոթ լինելով տեղի պայմաններին եւ առանձնահատկություններին եւ ունենալով որսի կամ

⁵ Այս համատեքստում հարցվողները բերել են «Գիլան» արգելավայրի օրինակը, երբ դեռեւս 2007թ. «Խոսրովի անտառ» պետարգելոցի կենտրոնական հատվածի կարգավիճակը փոխվեց, եւ ստեղծվեց «Գիլան» արգելավայրը՝ այսպիսով թույլատրելով տնտեսական եւ գյուղատնտեսական գործունեությունը տվյալ արգելավայրում:

արածեցման վերահսկման ավանդական մեթոդներ՝ նրանք ավելի լավ կկարողանան ղեկավարել արգելավայրը:

⇒ Ըստ որոշ հարցվողների՝ համայնքն անկարող է դիմակայել արտաքին ուժերին: Այս հարցվողները դրական են մոտենում արգելավայրի համայնքային կառավարմանը:

Հարցվողների մեծ մասը դրական կարծիք ունի արգելավայրի համայնքային կառավարման վերաբերյալ: Իսկ հիմնական օգուտները, որ նրանք ակնկալում են տեսնել արգելավայրի ստեղծման արդյունքում, նոր աշխատատեղերն են (տեսուչներ, արգելավայրի աշխատակազմ, տուրիզմ, գյուղական հյուրատներ եւ այլն):

2.2.4 Արգելավայրի հիմնական նշանակությունը համայնքի համար

Բոլոր հինգ համայնքներում հարցվողների կեսը կարծիք է հայտնել, որ արգելավայրի արժեքը համայնքի համար բնապահպանական է, իսկ մնացած կեսը՝ սոցիալ-տնտեսական: Շատերը կարելուում են նախատեսվող արգելավայրը տուրիզմից ստացված եկամուտների եւ կանոնակարգված բնօգտագործման համար:

Տեղական եւ մարզային իշխանությունների, ինչպես նաեւ համայնքի այլ ներկայացուցիչների գերակշիռ մասը գտնում է, որ նախատեսվող արգելավայրն ունի բնապահպանական նշանակություն: Բնապահպանական տեսանկյունից հարցվողները հիմնականում գնահատում են վայրի կենդանիների պոպուլյացիայի աճը, որսի արգելքը եւ կենսաբազմազանության պահպանությունը: Սոցիալական զարգացման համատեքստում հարցվողներն արժեւորում են նոր աշխատատեղերի ստեղծումը եւ տուրիզմի զարգացման հնարավորությունները: Տնտեսական առումով կրկին անգամ կարելուվում են նոր աշխատատեղերը եւ գյուղատնտեսության տարբեր ճյուղերի զարգացման հնարավորությունները:

Համայնքների ղեկավարները, մասնավորապես Գնիշիկ եւ Արենի գյուղերի համայնքապետերը, հաստատել են արգելավայրի նպատակների մասին իրենց իրազեկվածությունը՝ մեջբերելով «Գնիշիկ» միջհամայնքային հիմնադրամի կանոնադրության նախագծի դրույթները:

2.3 ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՄ ՇԱՐՈՒՐՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԱԳՑՈՒԹՅՈՒՆԸ

2.3.1 Համայնքների մասնակցության մասին իրազեկվածությունը

«Ներկա պահին համայնքները մասնակցում են արգելավայրի ստեղծման գործընթացին» հարցին հարցվողները նշել են, որ համայնքները մասնակցել են «Գնիշիկ» միջհամայնքային բնապահպանական հիմնադրամի ստեղծման քննարկումներին եւ հիմնադիր ժողովին⁶:

Առանձին կարծիք է հնչել այն մասին, որ համայնքները պարբերաբար մասնակցում են բնապահպանական գործընթացներին՝ անկախ նրանից տարածքը համայնքային է, թե պետական (օրինակ՝ սկսած 2004թ-ից 10 հա անտառապատում է իրականացվել): Տեղական իշխանությունները

6 «Գնիշիկ» միջհամայնքային բնապահպանական հիմնադրամի հիմնադիր ժողովի արձանագրությունը կարող է ներկայացվել՝ ըստ անհրաժեշտության:

գտնում են, որ անկախ արգելավայրի կառավարման սկզբունքից, համայնքը պետք է ունենա մասնակցության որոշակի իրավասություններ:

Հարցվողների մի մասը նշել է, որ տեղյակ չէ համայնքային մասնակցության մասին, կամ որ մինչ օրս համայնքները չեն մասնակցել արգելավայրի ստեղծման որեւէ գործընթացի:

2.3.2 Շահառուների մոտիվացիան

արգելավայրի ստեղծման եւ կառավարման գործընթացներին շահառուների մասնակից լինելու ցանկությունը քննարկվող հաջորդ հարցն է հանդիսացել հետազոտության ընթացքում: Համայնքապետերը գտնում են, որ իրենք պետք է կազմեն արգելավայրի կառավարող խորհրդի մի մասը: Խորհրդում, ըստ նրանց, պետք է ներկայացված լինեն համայնքապետերն ու տեղական համայնքների բնակիչները: Մինչդեռ Վայոց Ձորի մարզպետարանի ներկայացուցիչները նշում են, որ պետք է մասնակցեն արգելավայրի ստեղծման գործընթացին՝ ի պաշտոնէ:

Ընդհանուր առմամբ հարցվողներն ընկալում են իրենց մասնակցությունը հետեւյալ կերպ. հողահատկացումների համաձայնեցում, նախատեսվող ծրագրերի եւ աշխատանքների մասին քննարկումների մասնակցություն: Բացի այդ, կարելուվում են տարածքի պահպանման եւ բնապահպանական իրավախախտումներին արձագանքող հիմնադրույթները:

Մասնավոր ձեռնարկատերերը եւ ֆերմերներն առաջարկում են մասնակցության տարբեր ձեւեր. շրջակա միջավայրի մաքրության պահպանություն (հետեւելով օտարեկրյա զբոսաշրջիկների օրինակին), խաղողագործության, հին այգիների վերականգնման խորհրդատվություն եւ այլն: Հարցվողները պատրաստակամ են նաեւ անել ֆինանսական եւ աշխատանքային ներդրումներ՝ ուղղված Նորավանքի կիրճի բնական վիճակի վերականգնմանը: Հարցվողները առաջարկում են նաեւ բնապահպանական ծրագրերում կամավորական խմբեր ներգրավելու առաջարկ:

Վայոց Ձորում կարելուր տեղ են զբաղեցնում այծաբուծական տնտեսությունները: Այս ոլորտի ներկայացուցիչները եւս պատրաստակամ են աջակցել, օրինակ, Գնիշիկ գյուղում գործող գյուղացիական տնտեսություններին եւ օժանդակել ծրագրի նախանշված գործողությունների իրականացմանը:

«Եղեգնաձորի մարզային զարգացման կենտրոն» ԻԱՄ-ը նշում է, որ միության կազմում ընդգրկված են տարբեր ՀԿ-ներ՝ պատրաստակամ ներդնելու իրենց մասնագիտական ներուժը (էկոլոգիական, սոցիալական եւ իրավական բնագավառներում): Հաշվի առնելով տեղական ՀԿ-ների պատրաստակամությունը՝ տեղական ՀԿ-ների ներգրավումը խիստ կարելուր է, քանի որ գործառնական ծախսերի կրճատումը կարող է ավելացնել ծրագրի եկամուտները:

ՀԿ ոլորտի ներկայացուցիչները պատրաստակամ են առաջարկել ծառայություններ արգելավայրի կառավարման ինովացիոն մեխանիզմների մշակման գործում եւ աջակից լինել բնական աղետների դիմակայմանը: Ինչպես եւ տեղական ու մարզային իշխանությունները՝ ՀԿ ներկայացուցիչները եւս ցանկանում են ներգրավվել նախատեսվող արգելավայրի կառավարող խորհրդում եւ մասնակցել արգելավայրի կառավարման ռազմավարության մշակման գործընթացներին:

Ընդհանուր առմամբ, ՀԿ ոլորտի առաջարկներն են.

- ուսումնասիրությունների, վերլուծությունների իրականացում, պլանավորում,
- պլանավորման, մոնիտորինգի եւ գնահատման իրականացում,
- համայնքային մոբիլիզացիայի եւ մասնակցության ապահովում,

- երկխոսությունների դաշտի ձեւավորում,
- կարողությունների եւ հմտությունների զարգացում:

ՊՄՊ ՄԾ ներկայացուցիչները նշում են, որ կիսոյնդոտեն պատմամշակութային հուշարձանների եւ նրանց պահպանական գոտիներում որեւէ միջամտությանը՝ ղեկավարվելով «Հուշարձանների պահպանության մասին» ՀՀ օրենքով: Սակայն «Արփի» բնապատմական արգելոցի ներկայացուցիչը հնարավոր է համարում կառույցի մասնակցությունը ծրագրում: Նա առաջարկում է իրականացնել Նորավանքի կիրճի ստորին մասի պաշտպանությունը՝ արգելավայրի պաշտպանության մեխանիզմների հստակ ծանուցումը դիտարկելով որպէս նախապայման:

ԲՊՏ Վայոց Ձորի տարածքային բաժինը գտնում է, որ վերահսկողություն պետք է իրականացվի արգելավայրի ստեղծման ամենասկզբից: Նրանք առաջարկում են նաեւ բնապահպանական վերահսկողության վերապատրաստման դասընթացների կազմակերպում: Պետական այս կառույցը իր պարտականությունն է համարում արգելավայրի ստեղծման գործընթացներում մասնակցելը:

Ամփոփելով կարելի է ասել, որ ծրագրի այս փուլում Վայոց Ձորում շահառուները պատրաստակամ են մոբիլիզացնել առկա ֆինանսական, մարդկային եւ այլ ռեսուրսները՝ նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի ստեղծման գործընթացներին մասնակցելու համար:

2.3.3 Հնարավոր խնդիրները համայնքների շահերի տեսանկյունից

Համաձայն Բնության պահպանության միջազգային միության՝ ԲՀՊՏ-ն հողային կամ ջրային տարածք է, որն ունի կենսաբազմազանության, բնական եւ մշակութային արժեքների պահպանության նպատակ եւ կառավարվում է իրավական կամ այլ համապատասխան գործակառույցներով (ԲՊՄՄ, 1994(ա)): «Մշակութային արժեքներ» հղումն արտահայտում է այն միտքը, որ բնապահպանության շրջանակներում մեկտեղված են արգելավայրին հարակից համայնքների սոցիալ-տնտեսական եւ մշակութային շահերը, արժեքները, իրավունքները եւ պարտականությունները: Այս համատեքստում տարածված է նաեւ այն կարծիքը, որ բնապահպանական եւ համայնքային շահերն ու արժեքները հաճախ հակասության մեջ են:

Վայոց Ձորում անցկացված հետազոտության մասնակիցներից շատերը համակարծիք են ներկայացված տեսակետին: Հայաստանում նվազել են վարելահողերը եւ գյուղատնտեսությունը ծայրաստիճան անարդյունավետ է: Սա իր հերթին նպաստում է տարբեր խմբերի շահերի բախմանը կամ նրանց միջեւ տարաձայնությունների առաջացմանը: Ըստ որում՝ ՀՀ գյուղական համայնքների բնակչության զգալի մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ: Այսպիսով, համայնքային սեփականություն համարվող հողերի կրճատումն՝ ի հաշիվ արգելավայրի, շահառուների կողմից մեկնաբանվում է որպէս տնտեսական կորուստ եւ սոցիալական խնդիրների առաջացման նախադրյալ: Հիմնական մտավախությունները կապված են գյուղատնտեսության եւ բնապահպանական շահերի բախման հետ: Հարցվողները մտահոգություն են հայտնում այն առումով, որ դեղաբույսերի կամ սնկերի հավաքը եւ որսը տեղական բնակչության համար այլեւս սահմանափակ կլինեն:

Հետազոտության մասնակիցներից մեկի պնդմամբ արգելավայրը չի խոչընդոտի գյուղատնտեսական աշխատանքներին: Փոխարենը արգելավայրի ստեղծումը կարող է ազդել ՀՀ ՄՆ մշակութային արժեքների պահպանության պատասխանատուների (ՊՄՊ ՄԾ, «Արփի» բնապատմական արգելոց) շահերի վրա (ներկայումս նախատեսված արգելավայրի 81 հա տարածքը գտնվում է այս կառույցի ենթակայության տակ): Մեկ այլ հարցվողի կարծիքով համայնքների գործունեության զարգացումը կարող է խաթարվել հանքարդյունաբերության պատճառով (եթե համայնքային

սեփականություն համարվող հողերը կոնցեսիոն կառավարման սկզբունքով հանձնվեն մասնավոր տնտեսվարողներին): Միաժամանակ հարցման մասնակիցների գրեթե կեսն այն կարծիքին է, որ արգելավայրի ստեղծման գործընթացը որեւէ կերպ չի ներագդի համայնքների շահերի վրա: Այս հարցվողները նշում են, որ նախատեսվող արգելավայրը կծառայի նաեւ համայնքի նպատակներին՝ երաշխավորելով ճամբարատեղի, հանգստի կազմակերպման վայրեր եւ վայրի բույսերի կամ սնկերի կանոնակարգված հավաքի լայն հնարավորություններ:

ՊՄՊ ՄԾ ներկայացուցիչները խիստ մտահոգված են համայնքի կենսապայմանների հիմնախնդիրներով՝ նկատի ունենալով համայնքային հողերի եւ հետագայում բնակավայրերի ընդլայնման հնարավորությունների եւ արտադրության զարգացման սահմանափակումները: Մինչդեռ, ԲՊՏ Վայոց Ձորի տարածքային բաժնի ներկայացուցիչը կարծում է, որ անասնապահությունը դիտարկվող գյուղերում այնքան էլ զարգացած չէ, եւ բնապահպանության հետ բախումներն այսպիսով հասցված են նվազագույնի:

2.3.4 Մասնակցության եւ համագործակցության համապատասխան կարողությունները

2.3.4.1 Տեղական եւ մարզային իշխանություններ

Համայնքային խմբերի ներկայացուցիչներից մի քանիսը նշել են, որ ֆինանսապես նրանք ի զորու չեն մասնակցելու կամ աջակցելու արգելավայրի կառավարմանը: Նրանք համարում են, որ նման գործընթացներին մասնակցելու համար գյուղերը չունեն համապատասխան կարողություններ: Կա նաեւ կարծիք, որ համայնքները կարող են առաջարկել տեսչական ծառայություններ (օրինակ՝ որսհսկիչներ) եւ մասնակցել համայնքային հողերը ներառող արգելավայրի կառավարման ընթացակարգերին: Այս կարծիքն ունեցող հարցվողները նշում են, որ ունեն հանդիպումների կազմակերպման կամ գրասենյակային պայմանների տրամադրման համապատասխան կարողություններ:

2.3.4.2 Պետական կառույցներ

Հետազոտությանը մասնակից պետական հաստատություններն առաջարկում են բնապահպանական վերահսկողության գործառնությունների ստանձնման պատրաստակամություն եւ փորձառություն: «Հայաստառ»-ի ներկայացուցիչը հավելում է, որ կարող է տնկիներ տրամադրել ծառատունկի կազմակերպման համար: ԲՊՏ-ն կարելու է ի սկզբանե վերահսկողական աշխատանքների իրականացումը եւ ակտիվացումը՝ առ այն, որ օրենքը գերակայություն ունենա: ԲՊՏ ներկայացուցիչը նշում է նաեւ, որ կառույցն ունի բնապահպանական վերահսկողության թեմայով ուսուցումների կազմակերպման եւ տրանսպորտային միջոցներ տրամադրելու հնարավորություններ:

2.3.4.3 Հասարակական կազմակերպություններ

Հարցվողների այս խումբը տարբերվում է մյուս շահառուներից ծառայությունների եւ ընդհանուր կարողությունների առաջարկի առումով: «Մարզային զարգացման կենտրոն» ԻԱՄ-ը նշում է, որ միությունում ներգրավված են մի քանի ՀԿ-ներ, որոնք ունեն տուրիզմի, բնապահպանության, իրավագիտության, սոցիոլոգիայի եւ տնտեսագիտության բնագավառում վերապատրաստված եւ տվյալ ոլորտում փորձ ունեցող համապատասխան մասնագետներ: Համաձայն շահառուի առաջարկների՝ կարողությունների շարքին են դասվում նաեւ նյութական եւ ֆինանսական ռեսուրսները (շինություն, գույք, տրանսպորտային միջոցներ եւ այլն): Կազմակերպության ներկայացուցիչները հավելում են նաեւ համագործակցության ապահովման իրենց

պատրաստակամությունը եւ մարզի (հայրենի հողի) խնդիրների լուծման հարցում վճռորոշությունը՝ որպես ծրագրի հաջող իրականացման կարեւոր նախապայման:

Տեղական ՅԿ-ները անդրադարձել են նաեւ ֆինանսական ներդրումներ անելու կամ համաֆինանսավորման ծրագրերում մասնակցելու իրենց կարողություններին: Ընդհանուր առմամբ, Վայոց Ձորի մարզում հարցմանը մասնակցած ՅԿ-ներն ունեն հետեւյալ կարողությունները՝ տեղեկատվության տարածում, Էկոլոգիական կրթության ծրագրերի իրականացման փորձի ներդրում, նյութական եւ տեխնիկական օժանդակություն:

2.3.4.4 Մասնավոր հատված

Մասնավոր հատվածը առաջարկում է մասնակցության տարբեր ձեւեր. աշխատակազմ, տրանսպորտային միջոցներ (նաեւ ամենագնաց մեքենաներ), շաբաթօրյակների կազմակերպում, խաղողի այգիների վերականգնման եւ ծառատնկման խորհրդատվություն:

Մի քանի շահառուներ (ֆերմերներ, մեղվաբույծներ եւ այլն) նշել են մասնակցության համապատասխան կարողությունների բացակայության մասին՝ շեշտադրելով, որ համայնքները բաղկացած են աղքատ տնային տնտեսություններից, որոնք մեծապես կախված են պետական դուտացիաներից: Համաձայն այս հարցվողների՝ համայնքի տարեկան բյուջեն կազմում է մոտավորապես 20,000,000 ՀՀ դրամ, որը միայն 50%-ով է ֆինանսավորում ընթացիկ ծախսերը:

2.3.5 Ի՞նչ աջակցության կարիք ունեն շահառուները արգելավայրի կառավարմանը եւ շրջակա միջավայրի պաշտպանությանը արդյունավետորեն ներգրավվելու համար

Ծրագրում մասնակցություն ունենալու կարիքների գնահատման հարցում տեղական եւ մարզային իշխանությունները եւ համայնքային խմբերը հատկապես կարեւորում են *ուսուցողական ծրագրերը* եւ *իրազեկության բարձրացումը*, ինչպես նաեւ *ֆինանսական* աջակցությունը: Որոշ դեպքերում հարցվողները նշում են, որ աջակցության թվարկված բոլոր ձեւերը անհրաժեշտ են: «Տեխնիկական աջակցություն» ասելով՝ համայնքային խմբերը սովորաբար ենթադրում են տրանսպորտային միջոցներ, վառելանյութ, անհրաժեշտ սարքավորումներ եւ այլն: Հարցվողները օժանդակություն են համարում նաեւ *խորհրդատվական* (մասնավորապես արգելավայրի կառավարմանն առնչվող իրավաբանական խորհրդատվությունը) եւ *կազմակերպչական* աջակցությունը:

ՅԿ-ները նույնպես առավել կարեւորում են *ուսուցողական ծրագրերը* եւ *իրազեկումը*: Դրանց հետեւում են *ֆինանսական, տեխնիկական եւ իրավական* օժանդակության ձեւերը: «Մարզային զարգացման կենտրոն» ԻԱՄ-ը հատկապես կարեւորում է մասնագիտական տեխնիկական աջակցությունը եւ հավելում, որ իրենց կողմից իրականացված ծրագրերի հաջողությունը մինչ օրս պայմանավորված է եղել հատկապես այս գործոնով: ՅԿ-ները կարեւորում են նաեւ *իրավական եւ ֆինանսական* աջակցությունը եւ եւս մեկ անգամ բարձրացնում արգելավայրի համայնքային կառավարման օրենսդրական փոփոխությունների մասին ժամանակին իրազեկելու հարցը: Այս խմբի շահառուների համար կարեւոր է նաեւ *համագործակցությունը* նմանատիպ ծրագրերի հետ: Հարցվողները կարեւոր նախապայման են համարում ընդհանուր ծրագրի մասին իրազեկության բարձրացումը, ինչը թույլ կտա ավելի հստակ պատկերացնել կամ նախագծել մասնակցության ձեւերն ու հնարավորությունները: Ընդհանուր առմամբ, ՅԿ ոլորտը կարեւորում է *իրազեկության բարձրացումը* եւ *տեխնիկական աջակցությունը*:

Մասնավոր հատվածը ցանկանում է մասնակից լինել արգելավայրի թեմային առնչվող ամենամյա ֆորումներին եւ գտնում է, որ միջոցառումը կգրավի տարբեր շահառուների, այդ թվում նաեւ՝ դոնոր կազմակերպությունների ուշադրությունը: Խաղողագործությամբ եւ գինեգործությամբ զբաղվող մի ընկերություն պատրաստակամ է նախաձեռնել բնապահպանական փոքր միջոցառումներ (օրինակ՝ խաղողի այգիների վերականգնում): Մասնավոր հատվածի ներկայացուցիչներից երկուսը նշել են, որ չունեն աջակցության կարիք՝ այսփայտով բացառելով նաեւ հետագա համագործակցությունը: Մինչդեռ աջակցություն չպահանջող շահառուներից մեկը սարքավորումներ եւ այլ ռեսուրսներ տրամադրելու պատրաստակամություն է հայտնել:

«Հայանտառ»-ի համար հատկապես կարեւոր է ֆինանսական աջակցությունը՝ ծառատունկի համար համապատասխան մեխանիզմացիա եւ տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու համար: Միեւնույն ժամանակ նրանք նշում են, որ ունեն համապատասխան մարդկային ռեսուրսներ: Հարցման մասնակից մյուս պետական կառույցները համարում են աջակցության բոլոր ձեւերը կարեւոր (հատկապես՝ *տեխնիկական, ֆինանսական եւ կարողությունների հզորացման*): Բնապահպանական վերահսկողություն իրականացնող կառույցները նշում են, որ որսահսկիչները կամ վերահսկողության համար պատասխանատու այլ մարմինները պետք է *վերապատրաստվեն եւ ունենան բարձր աշխատավարձ* իրենց աշխատավայրում մնալու համար:

ՀՀ ՄՆ ներկայացուցիչները կարելորում են օրենսդրական դաշտի բարեփոխումը, ինչը թույլ կտա ընդլայնել իրենց լիազորությունները բնապահպանության ոլորտում եւ լինել պատասխանատու տարածքի կառավարման համար:

2.3.6 Արգելավայրի ստեղծման եւ հետագա կառավարման հիմնական խոչընդոտները

Համաձայն հետազոտության մասնակցների, արգելավայրի ստեղծման եւ հետագա կառավարման խնդիրները տարբեր են: Ամփոփ կերպով կարելի է տալ հետեւյալ ձեւակերպումը. մարզին հատուկ պայմանների եւ առանձնահատկությունների անտեսում եւ անհետեւողական մոտեցում համայնքային շահերին: Խոչընդոտ հանդիսացող այլ հանգամանքները ներկայացված են ստորեւ:

2.3.6.1 Տեղական եւ մարզային իշխանություններ

- Տեղական անհամաձայնություններ, միջանձնային բախումներ եւ անձնական շահեր,
- Տեղեկատվության պակաս,
- Չկանոնակարգված որս,
- Բնական ռեսուրսների օգտագործման սահմանափակումներ,

2.3.6.2 Պետական կառույցներ

- Համայնքային կառավարման մոդել («Հայանտառ»-ի տեսակետը),
- Բնական ռեսուրսների օգտագործման սահմանափակումներ,
- Եթե արգելավայրի ղեկավարի կամ այլ անձնակազմի նշանակումը հիմնված լինի ազգակցական կապերի վրա. այն է՝ որակավորման ստուգումը չկատարվի մրցութային կարգով,
- Կառավարման սխալ մեխանիզմների կիրառում, ինչը կարող է հանգեցնել կենսաբազմազանության ի սպառ վերացմանը:

2.3.6.3 Հասարակական կազմակերպություններ

- արգելավայրի կառավարման համակարգում համապատասխան որակավորում ունեցող անձնակազմի պակաս,
- Միջազգային օրենքներին «ԲՀՊՏ մասին» ՀՀ օրենսդրության անհամապատասխանություն,
- Սահմանափակ դրամական միջոցների ներդրում,
- Շահառուների շրջանում անարդյունավետ համակարգում,
- Ի սկզբանե գիտականորեն մշակված ծրագրի նկատմամբ անհետեւողականություն,
- Պետական այրերի անտարբերություն եւ ծրագրի առջեւ դրված խնդիրների թերի գնահատում,
- Համայնքային շահերի բախում (արգելավայրի մուտքի սահմանափակումներ, արգելավայրի ստեղծման համար համայնքային տարածքների նախատեսում եւ այլն):

2.3.6.4 Մասնավոր հատված

- Մասնավոր բիզնեսի մուտքը կիրճ (օրինակ՝ հյուրանոցներ, կայանատեղիներ), ինչը ըստ հարցվողի կոչնչացնի տեղի բնությունը,
- Վայրի դեղաբույսերի եւ ուտելի բույսերի հավաքի, ինչպես նաեւ որսի սահմանափակում,
- Անհատների (օրինակ՝ խոշոր հողատերեր եւ օլիգարխներ) կողմից արգելավայրի յուրացում կամ սեփականաշնորհում,
- Բնության եւ կենդանական աշխարհի ոչնչացում (արդեն արգելավայրի կառավարման շրջանում),
- Գյուղական բնակչության ըմբոստացում,
- Անտառապատման եւ կառավարման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների պակաս,
- Ջրօգտագործման վատ կառավարում (հարցվողը նշում է, որ ջուրը հոսում է անհայտ ուղղությամբ, մինչդեռ կարելի է օգտագործել այն անտառապատման աշխատանքներում),
- Համայնքային ենթակառուցվածքների վատ վիճակը, վատ հեռախոսակապը եւ ձմռան շրջանում անանցանելի ճանապարհները (ըստ հարցվողի՝ նման իրավիճակ է տիրում Գնիշիկ գյուղում, որը եղեգնածորից գտնվում է 23-24 կմ հեռավորության վրա):

Նշումներ եւ դիտարկումներ:

Հարցման մասնակիցներից ոմանք կարծում են, որ «Գնիշիկ» արգելավայրի ստեղծմանը ոչինչ չի կարող խանգարել: ԲՊՏ-ն շեշտում է ծրագրի իրականացումը ճիշտ հիմքերի վրա դնելու անհրաժեշտությունը: Այս կառույցի ղեկավարը համոզված է, որ կան արգելավայր ստեղծելու բոլոր նախապայմանները (հարակից համայնքների սակավ բնակչություն եւ այսպիսով՝ շահերի բախման նվազագույն ռիսկեր):

2.4 ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԸ

2.4.1 Շահառուների ակնկալիքների բազահայտում

2.4.1.1 Տեղական եւ մարզային իշխանություններ

Միջազգային կառույցների ներգրավումը համայնքի սոցիալական կյանքում մարզային իշխանությունների կողմից գնահատվում է որպես էական առաջընթաց եւ ձեռքբերում: Այս խմբի շահառուների ակնկալիքները տարբեր են՝ սկսած հազվագյուտ եւ էնդեմիկ տեսակների պահպանությունից մինչեւ բնապահպանական օրենքների կիրառումը: Սպասելիքների շարքում են նաեւ տուրիզմի զարգացումը եւ աշխատատեղերի ստեղծման հնարավորությունները:

Հարցվողներն առաջարկում են ստեղծել այցելուների տեղեկատվական կենտրոն, որտեղ տեղեկատվության տարածումը կիրականացվի բուկլետների տարածման եւ այլ միջոցներով: Հարցվողները կարելի է տարածքի ուսումնասիրությունը եւ հանրային քննարկումների կազմակերպումը՝ տեղացիներից յուրաքանչյուրի կարծիքը ունենդրելու եւ հաշվի առնելու նպատակայնությամբ: Շահառուների այս խմբի կողմից ներկայացված առաջարկն է՝ դիտարկել համայնքը որպես հիմնական շահառու՝ անկախ արգելավայրի կառավարման մեթոդի ընտրությունից:

2.4.1.2 Պետական կառույցներ

Պետական կառույցներն ակնկալում են, որ արգելավայրի ստեղծման արդյունքում կապահպանվի բնությունը եւ կգրանցվի կենդանական աշխարհի վայրի տեսակների պոպուլյացիայի աճ: «Հայաստան»-ի ներկայացուցիչը նշում է, որ սա հնարավոր կլինի այն դեպքում, եթե արգելավայրը լինի պետական: Իր հերթին, ԲՊՏ-ն նշում է, որ մարզում անասնաբուծությունը եւ արածեցումը թույլ են զարգացած: Հետեւապես ստեղծված են բնության արդյունավետ պահպանության բոլոր նախապայմանները: Նրանք դիտարկում են արգելավայրը որպես բնապահպանական վերահսկողության նոր համակարգ՝ ի նպաստ առավել արդյունավետ տեսչական ծառայության:

2.4.1.3 Հասարակական կազմակերպություններ

ՀԿ ոլորտի հարցվողները գտնում են, որ բնապահպանական եւ սոցիալ-տնտեսական գործոնները փոխկապակցված են: արգելավայրի ստեղծման համատեքստում ՀԿ-ներն ակնկալում են ինչպես համայնքների, այնպես նաեւ դոնոր կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը: Բնապահպանության հարցերում բնակչության իրազեկության բարձրացումը, ըստ ՀԿ ներկայացուցիչների, կնպաստի ապօրինի ծառահատումների եւ որսագողության նվազմանը: Էկոլոգիական գիտակցության բարձրացումը ազգաբնակչության շրջանում թույլ կտա կանոնակարգել արածեցումը եւ կասեցնել բնական ռեսուրսների գերշահագործումը: ՀԿ ներկայացուցիչները հստակ կապ են տեսնում Էկոտուրիզմի եւ գյուղատնտեսության միջեւ: (Էկոտուրիզմը ապահովում է համայնքի մասնակցությունը ծրագրում եւ լրացուցիչ եկամուտի հնարավորություններ է ստեղծում տեղացիների համար: Մյուս կողմից, վայրի դեղաբույսերի եւ ուտելի բույսերի կանոնակարգված հավաքը, մթերումը, ինչպես նաեւ սպառումը տուրիստների միջոցով տեղական համայնքների համար այլընտրանքային եկամուտի աղբյուրներ կապահովի): ՀԿ-ները ակնկալում են նաեւ, որ արգելավայրը աշխատանքային դաշտ կապահովի նաեւ գիտական ուսումնասիրությունների եւ բնապահպանական մոնիտորինգի առումով: ՀԿ ներկայացուցիչների հիմնական ակնկալիքներից են նաեւ որակապես նոր ենթակառուցվածքների հիմնումը եւ աշխատակազմի վերապատրաստումը:

2.4.1.4 Մասնավոր հատված

Հարցման արդյունքում մասնավոր հատվածի ներկայացուցիչները համարում են, որ արգելավայրը կարող է ստեղծել բազմաբնույթ հնարավորություններ տարբեր շահառուների համար, այդ թվում՝ լեռնամագլցում, լեռնագնացություն եւ հետիոտն արշավներ, ինչպես նաեւ հեծանվասպորտ: Այս ոլորտի ներկայացուցիչները նշում են նաեւ, որ արգելավայրն անմիջական կապ ունի տուրիզմի եւ տուրիստների այցելությունների աճի հետ: Գինեգործական ընկերություններից մեկն առաջարկում է արգելավայրի այցելուների ծրագրում ընդգրկել նաեւ իրենց մառանը՝ գինու համտեսման միջոցառում կազմակերպելու համար: Մասնավոր ձեռներեցները եւ ֆերմերները վստահ են, որ արգելավայրի առկայության դեպքում վերահսկողության մեխանիզմները ավելի կամրապնդվեն, իսկ

կենսաբազմազանությանը սպառնացող վտանգների դեմ պայքարը կդառնա անհամեմատ ավելի արդյունավետ:

Հարցվողները նշում են, որ արգելավայր ունենալու դեպքում տարածքը ավելի մաքուր կլինի: Վայրի բույսերի կանոնակարգված հավաքը եւ համապատասխան ընթացակարգերը եւս ակնկալվում են: Գյուղական համայնքների ֆերմերները, մեղվաբույծները, գինեգործները նշում են վայրի բերքի հավաքման գործընթացի համար վճարումներ ստանալու իրենց ակնկալիքները: Այս խումբը ներկայացնող հարցվողները կարծիք ունեն, որ արգելավայրը կլուծի պատմամշակութային հուշարձանների վերականգնման եւ պահպանության խնդիրը: արգելավայրի ստեղծումը ենթադրում է նաեւ անհետացող տեսակների վերականգնումը եւ վերադարձումը բնական միջավայր:

Վերոնշյալից բացի, հարցվողներն ակնկալում են մեղվապահության զարգացում, տարածքի, մարզի եւ երկրի ճանաչելիության ապահովում, ինչպես նաեւ վանական համալիրների վերականգնում ու բնության պահպանություն: Այծաբուծությամբ զբաղվող մի ձեռներեց կարծում է, որ բնապահպանությունը չի խոչընդոտի գյուղատնտեսությանը, քանի որ կոնկրետ իրենց գործունեության ոլորտում այծերին տանում են հեռավոր արոտավայրեր:

2.4.2 Ո՞վ պետք է իրականացնի արգելավայրի վերահսկողությունն ու կառավարումը

Արգելավայրի վերահսկողության համար պատասխանատու մարմնի վերաբերյալ կարծիքները խիստ տարաբնույթ են: Որոշ հարցվողներ կարծիք են հայտնում, որ համակառավարումը (արգելավայրի միասնական կառավարումը տեղական եւ մարզային իշխանությունների, ՀԿ-ների, պետական կառույցների եւ տուրիստական գործակալությունների կողմից) արգելավայրի կառավարման ամենացանկալի տարբերակն է: Իր հերթին հասարակության առավել լայն ընգրկումը արգելավայրի կառավարման գործընթացներում, ըստ հարցվողների, կնպաստի տեղական բնակչության կողմից արգելավայրի ընդունմանը: Ընդ որում, համայնքի ներկայացուցիչները (նույնիսկ որսորդները) կամ տեղական կառույցները (ինչպիսիք են ՀԿ-ները) ակնհայտ վստահություն են վայելում տեղական բնակչության շրջանում:

Համայնքի վարչական սահմաններում կամ հարակից տարածքներում տուրիզմը կանոնակարգելու եւ հնարավոր բացասական ազդեցությունները կանխելու համար շահառուները լուծում են տեսնում կրկին արգելավայրի համակառավարման մեջ: Կան հարցվողներ, սակայն, որոնք կարծում են, որ արգելավայրի վերահսկողության եւ կառավարման համար պատասխանատու են առանձին մարմիններ (օրինակ՝ ՀՀ Ազգային Ժողով, ՀՀ ԲՆ, ԲՊՏ, արգելավայրի ադմինիստրացիա եւ անգամ իրավապահ մարմիններ):

ԲՊՏ Վայոց Ձորի տարածքային բաժնի ներկայացուցիչը նշում է, որ 5 տարվա ընթացքում վերահսկողությունը եւ օրենքի կիրառումը բարելավվել են եւ ավելի ուժեղացել: Կառույցի ներկայացուցիչը կարծում է, որ անասնապահությունը դիտարկվող գյուղերում այնքան էլ զարգացած չէ, եւ բնապահպանության հետ բախումներն այսպիսով հասցված են նվազագույնի:

Հարցվողների կեսից ավելին դրական է արձագանքում արգելավայրի համայնքային կառավարմանը կամ արգելավայրի վերահսկողությանը ՏԻՄ-երի կողմից: Մասնավորապես ՀԿ ոլորտի հարցվողները գտնում են, որ համայնքի կողմից արգելավայրի վերահսկումը ավելի տրամաբանական է, իսկ համայնքային կառավարումը կերաշխավորի ռեսուրսների պլանավորման եւ օգտագործման թափանցիկություն: Այս հարցում եւս «Հայաստան»-ը հաստատուն է համայնքային մասնակցությանը հակասող իր դիրքորոշման մեջ: «Հայաստան»-ի ներկայացուցիչ կարծիքով, արգելավայրի վերահսկողությունն ու կառավարումը պետք է իրականացվի պետական կառույցների կամ մասնավոր ընկերությունների կողմից:

Մինչդեռ ՊՄՊ ՄԾ ներկայացուցիչները արգելավայրի վերահսկողի եւ կառավարողի դերում տեսնում են միայն իրենց՝ առաջարկելով, որ աշխատակազմն այսուհետ ունենա բնապահպանական տեսչական լիազորություններ:

2.4.3 Արգելավայրի ներգործությունը շահառուների գործունեության վրա

2.4.3.1 Դրական ներգործություն

Այս հարցի համատեքստում առավել շատ արձագանքներ են եղել՝ կապված համայնքների եւ ՀԿ-ների հետ: Սակայն մասնավոր բիզնեսը եւ տուրիստական գործակալությունները եւս դիտվում են որպես շահառուներ: Դրական կանխատեսումները քիչ են՝ կապված պետական կառույցների հետ, իսկ համայնքի եւ մարզերի շահերը երբեմն փոխկապակցվում են: Բացի նշվածներից, հարցվողները ծրագրի շահագրգիռ կողմ են համարում նաեւ օրենսդրական մարմիններին եւ կառավարությանը:

Մասնավորապես ՀԿ ներկայացուցիչները հետեւյալ կերպ են տեսնում արգելավայրի դրական ներգործությունը համայնքի վրա. ենթակառուցվածքների զարգացում, աղքատության հաղթահարում աշխատատեղերի ստեղծման միջոցով եւ առկա ռեսուրսների ռացիոնալ օգտագործում: Իսկ տուրիստական գործակալությունների համար կստեղծվի գործունեության ավելի լայն դաշտ եւ հնարավորություն տուրիզմի տարբեր ձևերի զարգացման համար: Հարցվողների այս խմբի տեսանկյունից ՀԿ-ները, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունները ծրագրեր կիրականացնեն եւ ձեռք կբերեն ավելի մեծ հեղինակություն, իսկ , օրինակ, «Հայաստան»-ի աշխատանքը կդառնա առավել արդյունավետ:

Տեղական եւ մարզային իշխանությունները գտնում են, որ միջազգային կազմակերպությունները կարող են նպատակային ներդրումներ անել: ՀԿ-ները կկազմակերպեն դասընթացներ՝ տեղական համայնքների հետ հաստատելով դրական հաղորդակցություն եւ լավ կապեր:

Մասնավոր հատվածի հարցվողները (համայնքային ֆերմերներ, մեղվապահներ, գինեգործներ եւ այլն) նշում են, որ համայնքները կարող են օգտվել վայրի բույսերի եւ դեղաբույսերի համար արվող վճարներից: Նրանք հավելում են, որ Գրավի կիրճում կան հյուրանոցների կառուցման եւ առողջարանների ստեղծման համապատասխան պայմաններ: Ըստ մասնավոր հատվածի՝ վ ՀԿ-ները կարող են ընդլայնել գործունեության շրջանակները:

Նշումներ:

Շահառուների բոլոր խմբերը այն կարծիքին են, որ արգելավայրի ստեղծումը հիմք կհանդիսանա տուրիզմի ոլորտում նոր նախաձեռնությունների եւ տեղական բնակչության ներգրավման համար: Որոշ դեպքերում մասնավոր բիզնեսը եւ տուրիզմը զուգորդվում են՝ որպես միեւնույն գործունեության դաշտ: Բացի այդ, շահառուները համարում են, որ Էկոտուրիզմը արգելավայրի ստեղծման համատեքստում մեծապես կնպաստի ծառայությունների, արտադրության եւ տնտեսական զարգացման այլ հնարավորությունների ստեղծմանն ու առաջընթացին: Տեղական մեկ ՀԿ արդեն իսկ մշակել է Էկոտուրիզմի զարգացման մոդելային ծրագրեր՝ հիմնվելով տեղական պայմանների եւ առանձնահատկությունների մասին իրազեկվածության վրա:

2.4.3.2 Բացասական ազդեցություն

Շահառուների հետազոտությունը ցույց է տալիս, որ Նախատեսվող արգելավայրը կարող է բացասական ազդեցություն ունենալ առաջին հերթին տեղական համայնքների, իսկ այնուհետև մասնավոր քիզնեսի եւ պետական կառույցների գործունեության վրա: Համայնքների մասով հիմնական դիտարկումները արվել են տեղական եւ մարզային իշխանությունների եւ մասնավոր հատվածի կողմից, մինչդեռ մասնավոր հատվածի վրա արգելավայրի հնարավոր բացասական ներգործության կանխատեսումներն արել են ՀԿ ոլորտի ներկայացուցիչները:

Բացասական ազդեցության առումով հարցվողները տալիս են երկիմաստ պատասխաններ: Նախ, նրանց ընկալմամբ մարդու գործունեությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ արգելավայրի կենսաբազմազանության կամ մշակութային օբյեկտների վրա: Երկրորդ, արգելավայրի սոցիալ-տնտեսական ազդեցությունները տարբեր պատճառներով կարող են բացասական ընկալվել մասնավորապես տեղական համայնքների վրա ներգործության առումով: Այսպես, օրինակ, ՊՄՊ ՄԾ ներկայացուցիչները նշում են, որ համայնքային հողերի կրճատումը գյուղաբնակների համար նշանակում է ռեսուրսների սահմանափակում: Իրենց համոզմամբ, արգելավայրի ստեղծման արդյունքում հուշարձանների պահպանական գոտիները նույնպես կտուժեն:

ՀԿ-ների տեսանկյունից համայնքները կկորցնեն գյուղատնտեսական նշանակության հողերը: Այս ոլորտի հարցվողները կարծում են նաեւ, որ մարզային իշխանությունների լիազորությունները կպակասեն, եւ կառավարման դերն այլեւս կթուլանա: Արգելավայր ստեղծումը, համաձայն ՀԿ ներկայացուցիչների, կարող է խոչընդոտել որոշ քիզնեսների (անասնապահություն, բույսերի մշակություն, պանրի արտադրություն եւ այլն) զարգացմանը:

Նշումներ:

Հարցվողների մեծ մասի կարծիքով արգելավայրի ստեղծումը որեւէ բացասական ազդեցություն չի կարող ունենալ միջազգային կազմակերպությունների, ՀԿ-ների եւ տուրիստական գործակալությունների գործունեության վրա:


Տեղական բնակչության կողմից արված կարեւոր դիտարկումներից մեկն այն է, որ արգելավայրի գործունեությունը կարող է վնասել էնդեմիկ բույսերին (օրինակ՝ տուրիստների չկանոնակարգված այցելությունների արդյունքում) եւ կամ բացասաբար ազդել որսորդների եւ եկեղեցի այցելողների վրա: Պետական կառույցների եւ մասնավոր հատվածի ներկայացուցիչների հիմնական մտավախությունները կապված են գյուղատնտեսության եւ բնապահպանության հնարավոր հակասությունների հետ:

2.4.4 Շահառուների վերապատրաստման կարիքները

*Error! Reference source not found.*ում ներկայացված են հետազոտված շահագրգիռ կառույցների կողմից վերապատրաստման դասընթացների⁷ կարելիության վերաբերյալ առաջ բերված պատասխանները: Գնահատումն

իրականացվել է 1-5 գնահատման սանդղակով, որտեղ 1-ը «անհրաժեշտ չէ», իսկ 5-ը՝ «խիստ անհրաժեշտ»: Նկարում բերված են հարցվողների չորս խմբերի կողմից գնահատված վերապատրաստման դասընթացների միջին ցուցանիշները: Արդյունքները ցույց են տալիս, որ «Կենդանիների պահպանություն» թեման ստացել է ամենաբարձր գնահատականը: Ընդ որում՝ այս թեման ամենից շատ կարելի էլ են ՀԿ ներկայացուցիչները, ինչպես նաև տեղական եւ մարզային իշխանությունները:

Ուսուցման այս թեմային հաջորդում են «բույսերի պահպանություն», «բնապահպանական օրենսդրություն», «արգելավայրերի կառավարման պլանավորում», «համայնքային արոտավայրերի կայուն կառավարում», «ռեկրեացիա եւ էկոտուրիզմ», «որսատնտեսության կազմակերպում», «օտար լեզուներ» եւ «համակարգչի ուսուցում» կետերը: Վայոց Ձորում հարցման մասնակից շահառուներ ուսուցման թեմաների շարքում հատկապես ցածր են գնահատում «հավատարմագրային կառավարումը»:



⁷ Հարցաշարում ներկայացվել են ուսուցման տաս թեմաներ:

2.5 ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս ուսումնասիրության շրջանակներում բացահայտվել են նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի ստեղծման ծրագրի շահառուները եւ գնահատվել են նրանց կարիքները, սպասելիքները եւ մտահոգությունները՝ կապված «Գնիշիկ» արգելավայրի ստեղծման ծրագրի հետ:

Վերլուծությունը հնարավորություն տվեց՝

- պարզել շահառուների իրազեկվածությունը «Գնիշիկ» արգելավայրի մասին,
- որոշել շահառու կազմակերպությունների կողմից արգելավայրի ստեղծման եւ կառավարման կարողությունները եւ պատրաստակամությունը,
- գնահատել շահառուների կարիքները եւ հնարավոր շահերի բախումը նրանց միջեւ,
- պարզել արգելավայրի ստեղծման ներգործությունը (դրական կամ բացասական) շահառուների գործունեության զարգացման վրա,
- գնահատել շահառուների ուսուցման կամ վերապատրաստման կարիքները՝ ըստ թեմաների:

Շահառուների վերլուծության համաձայն՝ ծրագրի հիմնական շահառուներն են տեղական համայնքները եւ այդ համայնքների բնակիչները: Բացառությամբ ՀՀ ՄՆ, որը արգելավայրի ստեղծման ծրագրի հանդեպ բացասական կամ հակադիր դիրքորոշում ունի, բոլոր շահառուները, այդ թվում՝ հիմնական շահառու հանդիսացող համայնքները դրական են վերաբերվում նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրին՝ հաշվի առնելով ապագայում ծրագրի իրականացման հնարավոր օգուտները:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ ծրագրի այս փուլում Վայոց Ձորում շահառուները պատրաստակամ են մասնակցել արգելավայրի ստեղծման ծրագրին՝ ներդնելով համապատասխան մարդկային եւ ֆինանսական ռեսուրսներ:

Արգելավայրի ստեղծման արդյունքում հարցվողների կողմից ակնկալվող հիմնական օգուտները նոր աշխատատեղերն են (տեսուչներ, արգելավայրի աշխատակազմ, տուրիզմ, գյուղական հյուրատներ եւ այլն):

Նրանք նշում են, որ եթե արգելավայրի կառավարումը լինի համայնքային մակարդակում, այն կարող է բերել շահույթ, ապահովել ենթակառուցվածքների (ճանապարհներ, էլեկտրամատակարարում) բարեկարգում կամ աջակցել համայնքային նախագծերի իրականացմանը (դպրոցներ, մանկապարտեզներ, ամբուլատոր գյուղական բժշկական հաստատություններ եւ այլն): Սակայն վերոնշյալ օգուտները կարող են զգալի չլինել այն պատճառով, որ այլեւս վայրի դեղաբույսերի եւ ուտելի բույսերի հավաքը կամ որսը կլինեն սահմանափակ:

Հայաստանում ընթացող բնապահպանական գործընթացներում լուրջ դերակատարություն ունեն ինչպես միջազգային, այնպես էլ տեղական ՀԿ-ները: Հարցման մասնակից ՀԿ-ները (Եղեգնաձորում եւ Վայքում) ակտիվ գործունեություն են ծավալում եւ պատրաստակամ են համապատասխան մասնակցություն ունենալ ծրագրում: Այս կազմակերպությունները որոշ առումով սահմանափակ փորձ ունեն նմանատիպ ծրագրերի իրականացման առումով: Այդ իսկ պատճառով մասնակցության համար նրանք դոնոր կազմակերպություններից ակնկալում են կազմակերպչական, ֆինանսական եւ տեխնիկական աջակցություն:

Բիզնես գործունեության հիմնական տեսակները Վայոց Ձորում հետեւյալն են՝ գինեգործություն, այգիների մշակում, անասնապահություն եւ մեղվապահություն: Ինչպես ներկայացված է գլուխ 2-ում մասնավոր հատվածն ունի լուրջ կարողություններ եւ զարգացման մեծ հեռանկարներ Վայոց

Ձորում: Մասնավոր հատվածը առաջարկում է եկամտի կայուն աղբյուրներ արգելավայրի հարակից համայնքների բնակիչների համար եւ պատրաստակամ է օժանդակել ծրագրի իրականացմանը նույնպես:

Հարցվողների մեծ մասը դրական կարծիք ունի արգելավայրի համայնքային կառավարման վերաբերյալ՝ բացառությամբ բնապահպանական պետական կառույցների («Հայաստան», ԲՊՏ): Այս կառույցները գտնում են, որ նախատեսվող արգելավայրը պետք է կառավարվի պետության կամ մասնավոր կազմակերպության կողմից: Միաժամանակ հարցման արդյունքները ցույց են տալիս, որ շահառուները որոշ դեպքերում առաջարկում են նաեւ արգելավայրի համակառավարման մեթոդներ:

Արգելավայրի ստեղծման եւ հետագա կառավարման խնդիրները, համաձայն հարցման մասնակցիների, տարբեր են՝ սկսած տեղական պայմանների կամ առանձնահատկությունների անտեսումից մինչեւ անհետեւողական մոտեցումը համայնքի շահերին ու կարիքներին:

Ընդհանուր առմամբ, «Գնիշիկ» արգելավայրի ստեղծման ծրագրի առջեւ դրված են բնապահպանական լուրջ նպատակներ, որոնց հասնելու ճանապարհին նաեւ պետք է հաշվի առնել տեղական բնակչության եւ այլ շահառուների դիրքորոշումները: Համայնքների հետ համագործակցության հաստատման եւ բարելավման աշխատանքներում պետք է հաշվի առնել օգուտները, այդ թվում համայնքների՝ հողի սեփականության եւ ռեսուրսների կառավարման որոշակի իրավունքները:

2.6 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Գնիշիկ» արգելավայրի ստեղծման ծրագրի շահառուների հետազոտությունը ցույց է տալիս, որ համագործակցությունը եւ փոխադարձ աջակցությունը տարբեր շահառուների միջեւ վճռորոշ նշանակություն կարող է ունենալ բնապահպանական նպատակներին հասնելու համար: Այս առումով, ուսումնասիրությունը կարող է ծառայել որպես ֆորմալ մեխանիզմների մշակման հիմք, ինչը թույլ կտա համակարգել տարբեր շահառուների հաղորդակցությունը, աշխատանքների կազմակերպումը եւ հնարավոր կոնֆլիկտների լուծումը:

Պետք է մշակվեն մեխանիզմներ, որոնց շնորհիվ արգելավայրի կառավարման սկզբունքները հասկանալի կլինեն տեղական շահառուների համար: Որոշումների կայացման գործընթացները պետք է լինեն թափանցիկ, եւ շահառուների տարբեր խմբեր պետք է ունենան մասնակցության եւ մոնիտորինգի որոշակի իրավունքներ: Արգելավայրի կառավարման համատեքստում առաջարկվում է հետեւողական լինել հասարակայնության հետ կապերի ապահովման եւ նրանց կարծիքները հաշվի առնելու հարցում:

ՀՀ ՄՆ ՊՄՊ ՄԾ հետ հարցազրույցի ժամանակ պարզ դարձավ, որ տեղական մակարդակում հակադիր տրամադրություններ կան նրանց եւ այլ շահառուների միջեւ (որսորդներ եւ/կամ որսորդական կազմակերպություններ, հանքարդյունաբերողներ, Նորավանքի կիրճը թիրախային վայր դիտարկող այլ միջազգային ծրագրեր եւ կազմակերպություններ):

Ծրագրի իրականացման համար կարող է խոչընդոտ հանդիսանալ ՊՄՊ ՄԾ բացասական դիրքորոշումը: Այդ իսկ պատճառով շատ կարեւոր է հատկապես ծրագրի իրականացման վաղ փուլում նրանց հրավիրել երկխոսության: Բացի այդ, պետք է աշխատանքներ տարվեն բնապահպանական ծրագրերի իրականացման եւ տեղական համայնքների սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման ուղղությամբ:

Այսպիսով, ծրագրի իրականացնող կողմերը պետք է նպաստեն մասնակցային գործընթացների ակտիվացմանը: Գյուղապետարանների հետ աշխատանքների համակարգումը պետք է բարելավվի, քանի որ ծրագրի յուրաքանչյուր փուլում նրանք կստանան ավելի մեծ պարտականություններ: Մարզային իշխանությունների հետ համագործակցությունն իր հերթին կխթանի տեղական բնակչության մասնակցության պատրաստակամությունը՝ դրական ազդելով արգելավայրի կառավարման եւ մարզի ընդհանուր զարգացման վրա:

Տեղական մակարդակում աշխատանքներն արդյունավետ համակարգելու եւ արգելավայրի ծրագրի իրականացմանն աջակցելու ուղղությամբ պետք է իրականացվեն հետեւյալ ռազմավարական քայլերը.

- Ապահովել արգելավայրի կառավարման պլանի կազմման աշխատանքներում համայնքի եւ այլ շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությունը:
- Մշակել քաղաքականություն, ըստ որի՝ արգելավայրի հարակից համայնքների բնակիչները կունենան հողերի օգտագործման որոշակի իրավունքներ այն համայնքային տարածքների նկատմամբ, որոնք կընդգրկվեն նախատեսվող արգելավայրի սահմաններում:
- Համայնքային զարգացման ծրագրերի շրջանակներում հաշվի առնել ծրագրի մասին իրազեկության բարձրացման առաջնայնությունը:
- Տարածել տեղեկատվությունը հանդիպում-քննարկումների, գրականության, հեռուստատեսության եւ սեմինարների միջոցով:
- Ներկայացնել գրականությունը բուկլետների եւ/կամ տեղեկատվական թերթիկների տեսքով:
- Հանդիպումների կազմակերպման աշխատանքներում ներգրավել մասնագետների:
- Աշխատել բնապահպանության ոլորտի հիմնական պատասխանատուների (օրինակ՝ որսահսկիչներ, տեսուչներ եւ այլոք) հմտությունների զարգացման ուղղությամբ:
- Տեղայնացնել արգելավայրի կառավարման միջազգային փորձը՝ համապատասխան մարզի կարիքների:
- «Գնիշիկ» արգելավայրի մասով իրազեկությունը բարձրացնելիս անդրադառնալ հողահատկացման ծավալների եւ սահմանների հստակեցման հարցերին:
- Բարձրացնել բնակչության բնապահպանական գիտակցությունը եւ խթանել էկոլոգիական կրթության ծրագրերը:

Փորձը ցույց է տալիս, որ արգելավայրի ստեղծման ծրագրերը ավելի արդյունավետ են, երբ համայնքային զարգացման բաղադրիչի իրականացման գործում բնապահպանական կառույցները համագործակցում են համապատասխան կարողություններ (գյուղի զարգացում, ագրոբիզնես, բարձրարժեք գյուղատնտեսություն, ենթակառուցվածքի զարգացում եւ այլն) տնօրինող կառույցների հետ: Հարկավոր է անհրաժեշտ ջանքեր գործադրել շահառուների միջեւ համագործակցությունը եւ հաղորդակցությունը ապահովելու կամ բարելավելու ուղղությամբ, որպեսզի բնապահպանական եւ բնական ռեսուրսների կառավարման խնդիրները համապատասխան եւ ժամանակին լուծում ստանան:

3 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

3.1 ՀԱՎԵԼՎԱԾ 1. Հետազոտության մասնակից շահառուների ցանկ

N	Շահառուներ	Հասցե	Հեռախոսահամար	Էլեկտրոնային փոստ	Հարցվող	Պաշտոն
	1. ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
1	Վայոց ձորի մարզպետարան / Տարածքային կառավարման վարչություն	Շահումյան 5, Եղեգնաձոր	93550002	arambakunc@rambler.ru	Արամ Գրիգորյան	Վարչության պետ
2	Ագարակաձորի գյուղապետարան	Ագարակաձոր	28123980, 094441655		Դերենիկ Մարտիրոսյան	Գյուղապետ
3	Գնիշիկի գյուղապետարան (Գնիշիկ եւ Մոզրով համայնքների ներկայացուցչություն)	Գնիշիկ / Մոզրով	93333386		Մեսրոպ Մելքոնյան	Գյուղապետ
4	Խաչիկի գյուղապետարան	Խաչիկ	93681742		Վարդան Ներսիսյան	Գյուղապետ
5	Արենիի գյուղապետարան	Արենի	28160001, 093236804		Ժիրայր Եղյան	Գյուղապետ
	2. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ					
6	«Հայաստան» ՊՈԱԿ, Վայոց ձորի մասնաճյուղ	Եղեգնաձոր	93188484		Մուրադ Հարությունյան	Մասնաճյուղի տնօրեն
7	«Արփի» բնապատմական արգելոց	Արենի	93933780		Ավետ Հայրապետյան	Արգելոցի վարիչ
8	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ (ԲՊՏ Վայոց ձորի տարածքային բաժին)	Նարեկացի 18ա, Եղեգնաձոր	93950300, 028120133		Վահիկ Գրիգորյան	Բաժնի պետ
9	ՀՀ մշակույթի նախարարություն (Պատմական մշակույթի պահպանության Վայոց ձորի մարզային ծառայություն)	Մոմիկի 2, Եղեգնաձոր	93523694, 028122750	grigor.babajanyan@yandex.ru	Մելանյա Դովլաթյան	Ծառայության պետ
	3. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՆԱԵՆ՝ ԿՈՌՊԵՐԱՏԻՎՆԵՐ, ԱՍՈՑԻԱՑԻԱՆԵՐ, ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ)					
10	«Հայաստանի կանաչների միություն» ՀԿ (Վայքի մասնաճյուղ)	Շահումյան 80, Վայք	37493348556	ruzanvayk@rambler.ru	Ռուզան Ղազարյան	Տնօրեն
11	«Մարզային զարգացման կենտրոն» ԻԱՄ	Եղեգնաձոր	28125307, 093373493	maramani@rambler.ru	Ալեքսան Ավագյան	Տնօրեն
12	Օրիուս կենտրոն	Շահումյան 5, Եղեգնաձոր	77772202	aramm@mail.ru	Արամ Մաթեոսյան	Համակարգող

13	«Աշխատանք եւ հայրենիք» ՀԿ	Ջերմուկի խճուղի 10ա, Վայք	93289326	vaykshirak@rambler.ru	Շիրակ Միքայելյան	Ծրագրի ղեկավար
14	«Սյունիք» ԲՀԿ	Մոմիկի 5, 3601 Եղեգնաձոր	99013594	nara.syunikngo@yahoo.com	Նարա Հարությունյան	Ծրագրի ղեկավար
15	«Խաչի տակ» սպառողական կոոպերատիվ	Արենի	93424406		Լեւոն Լեւոնյան	Նախագահ
	4. ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ					
16	«ԱՐԻԴ» այծաբուծական տնտեսություն	Երեւանյան խճուղի 1, Եղեգնաձոր	93800250		Սերգեյ Բայաթյան	Փոխտնօրեն
17	«Գոլդեն գուլթ» այծի պանրի գործարան ՓԲԸ	Մոմիկի 9, Եղեգնաձոր	93081878		Խաչիկ Մարտիրոսյան	Տնօրեն
18	«Արփա ալկո» գինու գործարան (Նախկին Զիմլեյ) (գինեգործություն, խաղողագործություն, այգեգործություն)	Արենի	93610225	m.grigoryan@mail.ru	Միքայել Գրիգորյան	Տնօրեն/բաժնետեր
19	«Մեծ Սյունիք» ՓԲԸ (գինեգործություն, խաղողագործություն, այգեգործություն)	Աղավաձոր	93202076	info@metssyunik.am	Վահրամ Մաթեոսյան	Հիմնադիր
20	«Արենի» ՓԲԸ (գինեգործություն, խաղողագործություն, այգեգործություն)	Արենի	93424406	rafsim@mail.ru	Ռաֆիկ Հայրապետյան	Հիմնադիր
21	«Վազո» ՍՊԸ (խանջարոլյունաբերություն)	Գնիշիկ	93410888		Գագիկ Սմբատյան	Հիմնադիր
22	«Երգներգո» ՓԲԸ (ՀԵԿ)	Արենի	99090350		Վանիկ Մանուկյան	ՀԵԿ-ի պետ
23	Անասնապահ	Ագարակաձոր			Ալիխան Նազարյան	Ինքնագթաղ
24	Մեղվապահ	Խաչիկ, փողոց 10, տուն 5,	82162407		Վահան Սարգսյան	Ինքնագթաղ
25	Մեղվապահ	Արենի			Արծրունի Սարգսյան	Ինքնագթաղ

3.2 ՀԱՎԵԼՎԱԾ 2. Շահառուների վերլուծության աղյուսակ

Շահառու կամ ենթախումբ	Շահառուների կարիքներ	Ակնկալիքներ	Արգելավայր բացասական ներգործության մտավախություններ	Կարողություններ եւ մոտիվացիա	Դեր եւ դիրքորոշում
Տեղական եւ մարզային իշխանություններ	Իրազեկության բարձրացում եւ վերապատրաստում:	Միջազգային կազմակերպությունների մասնակցությունը համայնքի սոցիալ-տնտեսական կյանքում: Տուրիզմի զարգացում եւ աշխատատեղերի ստեղծում: Համայնքային արոտավայրերի հմուտ կառավարում: Որս լիցենզիայով (արդյունքում տեղական համայնքի բյուջեի համալրում):	Բնապահպանության եւ գյուղատնտեսության միջեւ հնարավոր հակասությունները: Համայնքների շահերի եւ կարիքների անտեսումը: Տուրիստների չկանոնակարգված հոսքը արգելավայրի տարածք, ինչի արդյունքում կարող են տուժել էնդեմիկ բույսերը: Չկանոնակարգված որսը:	Տեսչական ծառայություններ: Հանդիպումների կազմակերպում: Հանդիպումների եւ աշխատանքի կազմակերպման համար համապատասխան սենյակների տրամադրում: ➔ <u>Մոտիվացիա</u> . ցանկանում են արգելավայրի կառավարման խորհրդի մաս կազմել: Հասարակության լայն խավերի ներգրավում: Համայնքային մասնակցություն սահմանների ճշտման եւ սահմանագծման աշխատանքներին:	Հիմնական շահառուներ են. առանցքային դեր ունեն բնապահպանական այս նախագծում՝ ըստ բնօգտագործման լիազորությունների, իրավասությունների եւ պատասխանատվության կամ պահանջների: Նրանք աջակից են արգելավայրի ստեղծման նախաձեռնություններին եւ նպատակներին:
Պետական կառույցներ					
i. «Հայաստան» ՊՈԱԿ, Վայոց Ձորի մասնաճյուղ	Տրանսպորտային միջոցներ եւ մեխանիզացիա: Վերապատրաստում եւ աշխատավարձի բարձրացում:	Պետական արգելավայր:	Արգելավայրի համայնքային կառավարման մոդելը:	Արգելավայրի բնապահպանական վերահսկողություն:	Հիմնական շահառու (կառույցը <i>դեմ</i> կողմնորոշում ունի արգելավայրի համայնքային կառավարման մոդելին):
ii. ԲՊՏ Վայոց ձորի տարածքային բաժին	Տեխնիկական եւ ֆինանսական ներդրումներ:	Կենդանական աշխարհի արդյունավետ պահպանություն: Բնապահպանական վերահսկողության ուժեղացում:		Տեսչական ծառայություններ: Բնապահպանական տեսչական աշխատանքների մասով ուսուցումների կազմակերպում եւ փորձի ներդրում:	Հիմնական շահառու (աջակից):
iii. ՀՀ մշակույթի նախարարություն (Պատմական մշակույթի պահպանության Վայոց ձորի մարզային ծառայություն)	Արգելավայրի կառավարման պատշաճ իրավական լիազորություններ:	Բնության պահպանություն եւ վայրի կենդանիների պոպուլյացիայի աճ:	Արգելավայրի ղեկավարի կամ այլ անձնակազմի՝ ազգակցական կապերի վրա հիմնված նշանակումները:	➔ <u>Մոտիվացիա</u> . բնապահպանական վերահսկողություն իրականացնելու լիազորություններ:	Հիմնական շահառու (կառույցը <i>դեմ</i> կողմնորոշում ունի պատմամշակութային հուշարձանների պահպանական գոտիներում որեւէ միջամտությանը: Կառույցն ունի նաեւ համապատասխան կարողություններ եւ լիազորություններ բացասաբար ազդելու ծրագրով նախանշված արդյունքների վրա):
Հասարակական	Մասնակցության	Սոցիալ-տնտեսական	Սահմանափակ ներդրումներ	Համապատասխան մարդկային ռեսուրսներ	Երկրորդական շահառուներ

կազմակերպություններ	ծեւերի եւ հնարավորությունների մասով իրազեկության բարձրացում: Ֆինանսական, տեխնիկական եւ իրավական աջակցություն: Նմանատիպ ծրագրերի հետ համագործակցություն եւ փորձի փոխանակում:	պայմանների բարելավում: Միջազգային զարգացման գործակալությունների հետ համագործակցություն: Հասարակության ակտիվ մասնակցություն արգելավայրի կառավարման գործընթացում: Բնապահպանական հարցերի մասին իրազեկվածության մակարդակի բարձրացում: Կայուն գյուղատնտեսություն եւ կանոնակարգված բնօգտագործում: Որսագողության եւ ապօրինի ծառահատումների նվազեցում: Տարածքների գիտական ուսումնասիրություններ եւ բնապահպանական մոնիտորինգ: Ենթակառուցվածքների զարգացում: Տուրիզմի զարգացում:	կամ անբավարար ֆինանսական միջոցներ:	տուրիզմի, բնապահպանության եւ կառավարման ոլորտներում աշխատանքներ իրականացնելու եւ փորձ ներդնելու համար: Հաստատված համագործակցություն: Ֆինանսական ներդրումներ:	(անհրաժեշտ է ծրագրի տարբեր փուլերում ներգրավել նրանց համագործացության պրոցեսներում: Նրանք պատրաստակամ են համագործակցել եւ աջակցել ծրագրի իրականացմանը):
Մասնավոր հատված	Տարեկան ֆորումների միջոցով իրազեկության բարձրացում: Ֆինանսական, տեխնիկական եւ իրավական աջակցություն: Համագործակցություն բնապահպանական նախաձեռնություն-	Արգելավայրի այցելուների ծրագրում հետեւյալ ներառում. լեռնամագլցում, հեծանվասպորտ եւ հետիոտն արշավներ: Տուրիզմի աճ: Բնապահպանական վերահսկողության ուժեղացում:	Արգելավայրի կառավարումը կամ ապօրինի զավթումը օլիգարխների կողմից (օրինակ՝ որպես որսատեղի): Հողերի մասնատում: Գյուղական համայնքների՝ արտաքին ուժերին դիմակայելու անկարողություն: Բնօգտագործման սահմանափակումներ	Աշխատակազմ եւ ամենագնաց մեքենաներ: Խաղողի այգիների հիմնման եւ ծառատունկի մասով խորհրդատվություն:	Երկրորդական շահառուներ (անհրաժեշտ է ծրագրի տարբեր փուլերում ներգրավել նրանց համագործացության պրոցեսներում: Նրանք պատրաստակամ են համագործակցել եւ աջակցել ծրագրի իրականացմանը: Բնօգտագործման առումով շահառուների այս խումբը ունի նաեւ որոշակի պահանջներ եւ շահեր):

	ներում: Կանոնակարգված բնօգտագործում: Արգելավայրի տարածքի մաքրում եւ բարեկարգում: Վայրի բույսերի եւ դեղաբույսերի դիմաց վճարներ (արդյունքում տեղական համայնքի բյուջեի համալրում): Մեղվապահության զարգացում: Ենթակառուցվածքների վերականգնում: Վանական համալիրների վերակառուցում:	տեղական բնակչության համար:		
--	--	-----------------------------------	--	--

3.3 ՀԱՎԵԼՎԱԾ 3. Շահառուների կարիքների գնահատման հարցաթերթ

	WWF Armenia 96 Sarmen Str. Yerevan 0019 Armenia	AM Partners Consulting Company ap.1, 62/1 K.Ulnetsi Str. Yerevan, Armenia	
---	---	---	---

Հարգելի հարցվող,

Ձեզ ներկայացված հարցաթերթի լրացմամբ Դուք կօժանդակեք Բնության համաշխարհային հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում» ծրագրի իրականացմանը: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի կենսաբազմազանության պահպանությանը եւ նպաստել արգելավայրերի ընդլայնմանը՝ ապահովելով էկոհամակարգերի առավել ընդգրկուն ներկայացվածություն:

Հարցաթերթիկը կազմվել է նախատեսվող «Գնիշիկ», «Խուստուկ» եւ գործող «Ձանգեզուր» արգելավայրերի վերաբերյալ Ձեր մոտեցումները պարզաբանելու նպատակով: Ծրագրի իրականացման թիմը կարելուորում է Ձեր կարծիքը՝ ակնկալելով հստակ պատասխաններ:

Ակնկալում ենք Ձեր աջակցությունը, կանխավ շնորհակալություն:

I. Անձնական տվյալներ

Անուն-ազգանուն	
Կազմակերպություն	
Պաշտոն	
Կրթություն	
Տարիքը	

Հասցեն

1. Տեղյակ եք, արդյո՞ք «Գնիշիկ», «Խուստուփ» արգելավայրերի ստեղծման եւ ընդլայնման ծրագրերի մասին: Եթե **այո**, ապա նշեք, թե ինչ գիտեք (ո՞վ է նպատակով եւ այլն) աղբյուրներից:

այո	ոչ

«Չանգեզուր» արգելավայրի ստեղծում, ո՞ր ծրագրով, ի՞նչ

2. Տեղյակ եք, արդյո՞ք, «Գնիշիկ», «Խուստուփ» արգելավայրերի նախատեսվող, ինչպես նաեւ գործող «Չանգեզուր» արգելավայրի առկա տարածքների մասին: Եթե **այո**, ապա նշեք սահմանները:

այո	ոչ

3. Ինչպե՞ս եք վերաբերվում նշված արգելավայրերի ստեղծմանը եւ ընդլայնմանը: Ինչու՞:

դրական	չեզոք	բացասական

4. Ինչպիսի՞ տեղեկատվության պակաս է զգացվում արգելավայրերի վերաբերյալ:

Տեղեկատվություն	Կարելիությունը		
	քիչ կարելի	կարելի	շատ կարելի
Քարտեզներ, հողօգտագործման պլաններ			
Իրավական դաշտ, օրենսդրություն			
Բնապահպանական սահմանափակումներ			
Արգելավայրերի կառավարում եւ օգտագործում			
Արգելավայրերի կառավարման միջազգային փորձ			
Տարածքի ուսումնասիրությունների արդյունքներ			
Այլ (նշեք)			
Այլ (նշեք)			
Այլ (նշեք)			

5. Նշեք տեղեկատվության ձեռքբերման եւ հաղորդակցության ցանկալի ձեւերը:

Տեղեկատվության աղբյուր	Կարելիությունը		
	քիչ կարելի	կարելի	շատ կարելի
Հանդիպումներ			
Գրականություն			
Ինտերնետ, Էլեկտրոնային փոստ			
Այլ (նշեք)			
Այլ (նշեք)			

Այլ (նշեք)			
------------	--	--	--

6. Ինչպե՞ս եք ընդունում համայնքի վարչական սահմաններում գտնվող տարածքներում արգելավայր ստեղծելու գաղափարը: *Հարցը տալ միայն մարզպետարանների եւ համայնքների ներկայացուցիչներին:*

Համաձայն եմ, որովհետեւ

Համաձայն չեմ, որովհետեւ

7. Ինչպե՞ս եք վերաբերվում արգելավայրերի համայնքային կառավարմանը:

Դրական	Բացասական	Դժվարանում եմ պատասխանել

Որովհետեւ

8. Ո՞րն է արգելավայրերի հիմնական նշանակությունը համայնքի համար, պարզաբանել: *Հարցը տալ միայն մարզպետարանների եւ համայնքների ներկայացուցիչներին:*

ա. սոցիալական, քանի որ _____

բ. տնտեսական, քանի որ _____

գ. բնապահպանական, քանի որ _____

9. Ներկա պահին համայնքները մասնակցում են արգելավայրերի ստեղծման եւ ընդլայնման գործընթացներին: Ինչու՞, ինչպե՞ս: *Հարցը տալ միայն մարզպետարանների եւ համայնքների ներկայացուցիչներին:*

այո	ոչ

10. Ներկա պահին արգելավայրերի ստեղծումը եւ ընդլայնումը կարող է արդյոք խնդիրներ առաջացնել համայնքների շահերի տեսանկյունից: Ինչու՞: *Հարցը տալ միայն մարզպետարանների եւ համայնքների ներկայացուցիչներին:*

այո	ոչ

11. Արգելավայրի համայնքային կառավարումը կարո՞ղ է ստեղծել սոցիալական խնդիրների լուծման լրացուցիչ հնարավորություն: Խնդրում ենք պարզաբանել Ձեր պատասխանը: *Հարցը տալ միայն մարզպետարանների եւ համայնքների ներկայացուցիչներին:*

Այո	Մասնակի	Ոչ	Դժվարանում եմ պատասխանել

12. Նշեք արգելավայրերի կառավարման խնդիրներում Ձեր կողմից հնարավոր մասնակցության/աջակցության ձեւերը, որոնք կնպաստեն դրանց արդյունավետ կառավարմանը:

13. Ի՞նչ աջակցության կարիք ունի համայնքը արգելավայրերի կառավարմանը եւ շրջակա միջավայրի պաշտպանությանը արդյունավետորեն ներգրավվելու համար: Խնդրում ենք մանրամասնել պատասխանները: *Հարցը տալ միայն մարզպետարանների եւ համայնքների ներկայացուցիչներին:*

ա. Տեխնիկական _____

բ. Իրավական _____

գ. Ուսուցողական / իրազեկման _____

դ. Ֆինանսական-----

ե. Այլ _____

զ. Կարիք չունեն աջակցության _____

14. Դուք, որպես շահառու, ի՞նչ աջակցության կարիք ունեք արգելավայրերի կառավարմանը եւ շրջակա միջավայրի պաշտպանությանը արդյունավետորեն ներգրավվելու համար: Խնդրում ենք մանրամասնել պատասխանները: Հարցը տալ համայնքների ներկայացուցիչներին:

ա. Տեխնիկական _____

բ. Իրավական _____

գ. Ուսուցողական / իրազեկման _____

դ. Ֆինանսական _____

ե. Այլ _____

զ. Կարիք չունեն աջակցության _____

15. Որո՞նք են արգելավայրի ստեղծման, ընդլայնման եւ հետագա կառավարման հիմնական խնդիրները, որոնք կարող են վտանգել այս ծրագրերը:

16. Ձեր համայնքն ունի՞
համապատասխան կարողություններ
համայնքային արգելավայրի կառավարման
համար: Մանրամասնել պատասխանը:
Հարցը տալ միայն մարզպետարանների եւ
համայնքների ներկայացուցիչներին:

17. Ի՞նչ կարողություններ է տնօրինում Ձեր կազմակերպությունը արգելավայրերի կառավարմանը մասնակցելու/աջակցելու առումով:
Մանրամասնել պատասխանը: Հարգը չտայ մարդպետարանների եւ համայնքների ներկայացուցիչներին:

18. Ինչպիսի կոնկրետ ակնկալիքներ ունեք արգելավայրերի ստեղծումից եւ ընդլայնումից: Մանրամասնել պատասխանը:

19. (Ձեր) ո՞ր կոնկրետ խնդիրների լուծմանը պետք է օժանդակի արգելավայրերի ստեղծումը: Մանրամասնել պատասխանը:

20. Ովքե՞ր պետք է ներգրավված լինեն արգելավայրերի գործունեության վերահսկողությանը: Ինչու՞: Մանրամասնել պատասխանը:

21. Կոնկրետ ինչպե՞ս կարող է արգելավայրերի ստեղծումը եւ ընդլայնումը նպաստել հետեւյալ շահառուներից յուրաքանչյուրի գործունեության զարգացմանը:

ա. Համայնք _____

բ. Մարզային իշխանություն _____

գ. Մասնավոր բիզնես _____

դ. ՀԿ-ներ _____

ե. Պետական կառույցներ («Հայաստան» ՊՈԱԿ, բնապահպանական տեսչություն, այլ)

զ. Միություններ _____

է. Միջազգային դոնոր կազմակերպություններ

ը. Տուրիստական կառույցներ _____

թ. Այլ _____

22. Կոնկրետ ինչպե՞ս կարող է արգելավայրերի ստեղծումը խանգարել հետեւյալ շահառուներից յուրաքանչյուրի գործունեության զարգացմանը:

ա. Համայնք _____

բ. Մարզային իշխանություն _____

գ. Մասնավոր բիզնես _____

դ. ՀԿ-ներ _____

ե. Պետական կառույցներ («Հայաստան» ՊՈԱԿ, բնապահպանական տեսչություն, այլ)

զ. Միջազգային դոնոր կազմակերպություններ

է. Միություններ _____

ը. Տուրիստական կառույցներ _____

թ. Այլ _____


23. Ինչպիսի՞ թեմաներով կցանկանայիք ուսուցումներ ստանալ: Գնահատե՛ք ըստ կարեւորության: 1-ից 5-ը, որտեղ 1-ը «անհրաժեշտ չէ», իսկ 5-ը՝ «խիստ անհրաժեշտ»:

Թեմա	Միավոր
Բույսերի պահպանություն	
Կենդանիների պահպանություն	

Հավատարմագրային կառավարում	
Բնապահպանական օրենսդրություն եւ կանոնակարգեր	
Արգելավայրերի կառավարման պլանավորում	
Համայնքային արոտավայրերի եւ խոտհարքերի կայուն կառավարում	
Ռեկրեացիայի, էկոտուրիզմի	
Որսատնտեսության կազմակերպում	
Օտար լեզուների ուսուցում	
Համակարգչի ուսուցում	
Այլ՝	
Այլ՝	
Այլ՝	

24. Բաց առաջարկություններ եւ կարծիք

3.4 ՀԱՎԵԼՎԱԾ 4. Նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի քարտեզ



3.5 ՀԱՎԵԼՎԱԾ 5. Հղումներ

- 1) ԲՀՀ հայաստանյան մասնաճյուղի եւ Կրիտիկական Էկոհամակարգերի համագործակցության հիմնադրամ (2006) «Գնիշիկ» արգելավայրի կառավարման պլանի նախագիծ: «Կենսաբազմազանության եւ լանդշաֆտների պահպանության միություն» ՀԿ:
- 2) Համաշխարհային բանկ (2010) Բնապահպանական կառավարման պլան: Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցունակության ծրագիր: Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագրի իրականացման գործակալություն:
- 1) Catacutan D. and Taniu J. (2007) *Engaging Stakeholders in integrated natural resource management: approaches and guidelines from landcare*. World Agro forestry Centre
- 2) Schmidt-Soltau K. (2004) *Stakeholder analysis for the Intervention of the German Financial Cooperation in the Context of the Forest and Environment Sector Programme in the South West Province of Cameroon*. Mary Boya Meboka, CODEV Service. Sponsored by KfW
- 3) Frame B., Gordon R., Mortimer C. (2010) *Hatched: The capacity for sustainable development*. Publication (SD) Paper 1
- 4) Zeppel H. (2006) *Indigenous ecotourism: sustainable development and management*. CABI International.
- 3) Herath G. and Prato T. (2006) *Using multi-criteria decision analysis in natural resource management*. Ashgate Publishing Limited.

<http://www.iucn.org/about/>

http://www.pf-armenia.org/fileadmin/pfa_uploads/PFA_Environmental_Report.pdf

<http://www.unep.org/bpsp/Agrobiodiversity/agrobiodiversity%20thematic/Russiakis.pdf>

<http://conserveonline.org/workspaces/patools/pathreats>

http://digitalcommons.library.unlv.edu/cgi/viewcontent.cgi?article=1000&context=sustain_pubs#page=255

http://www.unep-wcmc.org/protected_areas/categories/eng/ex-v.htm

<http://www.europarc.org/what-we-do/alfred-toepfer-schol/scholarship-registra/>

<http://coplan.com/wp-content/uploads/2010/10/SHs-Analysis-PMI-Presentation1.pdf>

www.panda.org/standards/1_1_SH_analysis/

<http://www.worldagroforestrycentre.org/sea/Publications/files/paper/PP0236-07.PDF>

<http://www.worldagroforestry.org/downloads/publications/PDFs/pp07154.pdf>

http://digitalcommons.library.unlv.edu/cgi/viewcontent.cgi?article=1000&context=sustain_pubs&sei-redir=1#search=%22Hatched:+The+capacity+for+sustainable+development.+%282010%29+Publication%22

http://www.indiana.edu/~workshop/colloquia/materials/papers/Tucker_Overcoming%20the%20Odds_Colloquium%20paper.pdf

<http://bookshop.cabi.org/Uploads/Books/PDF/9781845931247/9781845931247.pdf>

http://ashgate.com/default.aspx?page=637&calctitle=1&pageSubject=603&pagecount=2&title_id=6028&edition_id=9039